«Արեգակ»
ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա համար

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն 3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 9
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 10
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն 11
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 12
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 13

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
Վ. Սարգսյան փ. 26/1
«Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 595 999
Կայք www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Արեգակ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի բաժնետիրոջը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Արեգակ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի (Կազմակերպություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2024թ., այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերը և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Կազմակերպության ֆինանսական վիճակը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների (ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներ) համաձայն:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ ներկայացված է մեր եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահների մասնագիտական էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (*ՀԷՄՄԽ կանոնագիրք)* և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականություններն այդ պահանջներին և ՀԷՄՄԽ կանոնագրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Կազմակերպությունը լուծարելու կամ Կազմակերպության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Կազմակերպության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, որպես մեկ ամբողջություն, զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի պատճառով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի բարձր է, քան սխալի պատճառով էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:

- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- գնահատում ենք կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ հանգամանքների հետ կապված, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդ բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Կազմակերպության կողմից անընդհատության հիմունքի կիրառման դադարեցմանը:

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման համար հիմք հանդիսացող աուդիտի համար պատասխանատու գործընկերն է՝

Լուսինե Սարդարյան
Առաջադրանքի համար
պատասխանատու գործընկեր

Իրինա Գևորգյան
Ղեկավար գործընկեր
«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի տնօրեն

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
26 հունիսի 2025թ.

	Ծնթգ.	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	5	7,800,227	7,673,103
Տոկոսային ծախս	5	(266,224)	(568,145)
Զուտ տոկոսային եկամուտ		**7,534,003**	**7,104,958**
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս		(7,241)	(6,982)
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով զուտ ծախս		**(7,241)**	**(6,982)**
Զուտ (կորուստ)/օգուտ փոխարժեքային տարբերություններից		(34,608)	2,890
Զուտ այլ գործառնական եկամուտ	6	167,225	179,629
Գործառնական եկամուտ		**7,659,379**	**7,280,495**
Արժեզրկումից կորուստների զուտ հակադարձում	7	244,432	74,404
Անձնակազմի գծով ծախսեր	8	(2,060,789)	(2,291,870)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	9	(1,018,374)	(1,274,160)
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը		**4,824,648**	**3,788,869**
Շահութահարկի գծով ծախս	10	(886,872)	(734,137)
Տարվա շահույթ և ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք		**3,937,776**	**3,054,732**

6-ից 66-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2025թ. հունիսի 26-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Մարիամ Եսայան
Գործադիր տնօրեն

Արմինե Աղաջանյան
Ֆինանսական տնօրեն

«ԱՐԵԳԱԿ»
«AREGAK»
02581899

	Ծնթգ.	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11	1,035,107	1,387,739
Բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներ	12	1,321,153	2,139,337
Հաճախորդներին տրված վարկեր	13	29,741,306	27,422,790
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	14	2,350,447	1,415,510
Գուդվիլ	15	27,788	27,788
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	16	342,604	380,919
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	17	320,904	372,321
Այլ ակտիվներ	18	132,946	218,552
Ընդամենը ակտիվներ		**35,272,255**	**33,364,956**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Վարկեր և փոխառություններ	19	2,105,031	3,090,041
Ընթացիկ հարկային պարտավորություն		726,548	760,710
Վճարվելիք շահաբաժիններ	21	850,000	711,148
Հետաձգված հարկային պարտավորություններ	10	62,689	83,833
Վարձակալության գծով պարտավորություններ	17	341,244	421,518
Այլ պարտավորություններ	20	500,855	699,594
Ընդամենը պարտավորություններ		**4,586,367**	**5,766,844**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Բաժնետիրական կապիտալ	21	3,445,000	3,445,000
Չբաշխված շահույթ		27,240,888	24,153,112
Ընդամենը սեփական կապիտալ		**30,685,888**	**27,598,112**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		**35,272,255**	**33,364,956**

	Ծնթգ.	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ			
Ստացված տոկոսներ		7,646,654	7,567,929
Վճարված տոկոսներ		(278,508)	(699,033)
Վճարված միջնորդավճարներ և այլ վճարներ		(7,241)	(6,982)
Զուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից		16,603	947
Այլ ստացված եկամուտ		69,107	100,222
Անձնակազմի գծով ծախսեր		(2,066,185)	(2,286,117)
Այլ ընդհանուր վարչական ծախսերի վճարումներ		(804,410)	(923,650)
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում			
Բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներ		844,798	(18,905)
Հաճախորդներին տրված վարկեր		(2,043,752)	594,650*
Այլ ակտիվներ		44,568	58,058
Գործառնական պարտավորությունների աճ/(նվազում)			
Այլ պարտավորություններ		(56,602)	(37,848)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ՝ մինչև շահութահարկը		**3,365,032**	**4,349,271**
Վճարված շահութահարկ		(942,178)	(743,290)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքեր		**2,422,854**	**3,605,981**
ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ			
Ներդրումային արժեթղթերի ձեռքբերում	14	(1,901,056)	(292,099)
Մուտքեր ներդրումային արժեթղթերի մարումից	14	1,010,000	2,722,222*
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(81,036)	(30,310)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառք		13,490	37,246
Բիզնեսի միավորման արդյունքում ձեռք բերված դրամական միջոցներ	15	-	597,387
Ներդրումային գործունեության համար (օգտագործված)/ ներդրումային գործունեությունից ստացված դրամական հոսքեր		**(958,602)**	**3,034,446**
ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ			
Վարկերի և փոխառությունների մարում	19	(946,334)	(5,895,883)
Մուտքեր փոխառություններից	19	-	650,000
Վարձակալության գծով պարտավորությունների վճարում	17	(133,598)	(194,385)
Վճարված շահաբաժիններ	21	(711,148)	(650,000)
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված դրամական հոսքեր		**(1,791,080)**	**(6,090,268)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ		**(326,828)**	**550,159**
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(26,853)	(15,070)
Ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		1,049	3,757
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ		1,387,739	848,893
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ	11	**1,035,107**	**1,387,739**

* 2024թ. ընթացքում Կազմակերպությունն ուղղում է կատարել է 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա 255,480 հազար դրամ գումարով զիջված ակտիվների դասակարգման գծով (Ծանոթագրություն 14)՝ ակտիվները հաճախորդներին տրված վարկերից տեղափոխելով ներդրումային արժեթղթեր՝ դրամական հոսքերի հաշվետվության համապատասխան հոդվածներում:

Դրամական հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

հազ. դրամ	**Բաժնետիրական կապիտալ**	**Չբաշխված շահույթ**	**Ընդամենը**
Մնացորդը առ 1 հունվարի 2023թ.	3,445,000	21,809,528	25,254,528
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք			
Տարվա շահույթ	-	3,054,732	3,054,732
Տարվա ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք	**-**	**3,054,732**	**3,054,732**
Գործառնություններ սեփականատերերի հետ՝ գրանցված ուղղակիորեն սեփական կապիտալում			
Հայտարարված շահաբաժիններ	-	(711,148)	(711,148)
Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ	**-**	**(711,148)**	**(711,148)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	**3,445,000**	**24,153,112**	**27,598,112**
Մնացորդը առ 1 հունվարի 2024թ.	3,445,000	24,153,112	27,598,112
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք			
Տարվա շահույթ	-	3,937,776	3,937,776
Տարվա ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք	**-**	**3,937,776**	**3,937,776**
Գործառնություններ սեփականատերերի հետ՝ գրանցված ուղղակիորեն սեփական կապիտալում			
Հայտարարված շահաբաժիններ	-	(850,000)	(850,000)
Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ	**-**	**(850,000)**	**(850,000)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	**3,445,000**	**27,240,888**	**30,685,888**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

1 Ընդհանուր տեղեկատվություն

(ա) Կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Արեգակ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն (Կազմակերպություն) հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում որպես փակ բաժնետիրական ընկերություն 2006թ-ին: Կազմակերպության հիմնական գործունեությունը միկրոֆինանսավորման, անհատական բիզնես վարկերի և սպառողական վարկերի տրամադրումն է: Կազմակերպության գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից: Կազմակերպությունն ունի վարկային կազմակերպության լիցենզիա:

Կազմակերպության իրավաբանական հասցեն է Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Ամիրյան փ. 4/6, տարածք 152:

Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է 30 մասնաճյուղերի (2023թ-ին՝ 37 մասնաճյուղ) և 6 ներկայացուցչությունների (2023թ-ին՝ 7 ներկայացուցչություն) միջոցով: 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության բոլոր ակտիվները և պարտավորությունները գտնվում են Հայաստանի Հանրապետությունում:

2023թ. հունվարին Կազմակերպությունը ձեռք էր բերել «ՍԵՖ Ինտերնեյշնլ» ՈւՎԿ ՍՊԸ-ի բաժնետոմսերի 100%-ը (Ծանոթագրություն 15): Դուստր կազմակերպությունը միաձուլվեց Ընկերության հետ 2023թ. սեպտեմբերին: 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը դուստր կազմակերպություն չունի:

Կազմակերպության սեփականատերը «ԱՄՔՈՐ Հայաստան» հիմնադրամն է: Վերջնական հսկող կողմը «ԱՄՔՈՐ Հայաստան» հիմնադրամի Հոգաբարձուների խորհուրդն է՝ Ռոլանդ Ֆերնանդեսի նախագահությամբ:

Կապակցված կողմերի հետ գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 26-ում:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Ուստի, Կազմակերպության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որին բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Բացի այդ, շարունակական բնույթ կրող ռազմական հակամարտությունը Հայաստանի և Ադրբեջանի միջև, որի ավարտին Լեռնային Ղարաբաղի տարածքն անցավ Ադրբեջանի վերահսկողության ներքո 2023թ. սեպտեմբերին, և Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև շարունակվող ռազմական հակամարտությունը մեծացրել է անորոշությունը գործարար միջավայրում: Հայաստանի և Ադրբեջանի միջև իրավիճակը շարունակում է լարված մնալ՝ երկրների միջև սահմանի սահմանազատման շուրջ շարունակվող տարաձայնությունների պատճառով:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Կազմակերպության գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2 Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության հավաստում

Ներկայացված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների (ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներ) համաձայն:

(բ) Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Կազմակերպության ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է (դրամ), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Կազմակերպության գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը նաև այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է: 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ի պաշտոնական փոխարժեքներն էին համապատասխանաբար 396.56 դրամ և 404.79 դրամ 1 ԱՄՆ դոլարի համար և 413.89 դրամ և 447.9 դրամ 1 եվրոյի համար:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն Կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են առաջընթաց:

Դատողություններ

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված այն կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք նշանակալի ազդեցություն են ունեցել ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է Ծանոթագրություն 22(բ)-ում՝ չափանիշների սահմանում որոշելու համար, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որոշելու համար ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) չափման մեջ ապագայամետ տեղեկատվությունը ներառելու մեթոդաբանությունը, և ակնկալվող պարտքային կորուստների չափման համար օգտագործվող մոդելների ընտրություն:

Ենթադրություններ և գնահատման անորոշություն

Այն ենթադրությունների և գնահատման անորոշության վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց դեպքում առկա է նշանակալի ռիսկ, որ դրանք հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում կարող են հանգեցնել էական ճշգրտումների, ներկայացված է Ծանոթագրություն 22(բ)-ում՝ ֆինանսական գործիքների արժեզրկում. ելակետային տվյալների որոշում ակնկալվող պարտքային կորուստների չափման մոդելի համար, այդ թվում՝ ապագայամետ տեղեկատվության ներառումը:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերի փոփոխություններ

Կազմակերպությունը ժամկետից շուտ չի կիրառել հրապարակված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած նոր ստանդարտները, մեկնաբանությունները կամ փոփոխություններն այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս:

Որոշ փոփոխություններ և մեկնաբանություններ առաջին անգամ կիրառվում են 2024թ-ին, սակայն նշանակալի ազդեցություն չունեն Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների և հաշվապահական հաշվառման քաղաքականության վրա:

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասեր

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

(ա) Արտարժույթով գործառնություններ

Արտարժույթով գործառնությունները վերահաշվարկվում ֆունկցիոնալ արժույթի գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա փոխարժեքով:

Դրամային հոդվածների հետ կապված արտարժույթով գործառնությունների գծով օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է տարբերություն ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, ժամանակաշրջանի համար արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսների ու վճարումների մասով ճշգրտված ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված արտարժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև:

Վերահաշվարկից առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

(բ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն են կանխիկ դրամական միջոցները, ընթացիկ հաշիվների մնացորդները և բանկերում պահվող ցպահանջ ավանդները և մինչև 90 օր սկզբնական մարման ժամկետով ժամկետային ավանդները: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(գ) Բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներ

Բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցները ներառում են ժամկետային ավանդները բանկերում: Ժամկետային ավանդները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(դ) Տոկոսներ

Արդյունավետ տոկոսադրույք

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը զեղչում է ճիշտ մինչև՝

– ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեք կամ
– ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Կազմակերպությունը գնահատում է ապագա դրամական հոսքերը՝ դիտարկելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ակնկալվող պարտքային կորուստները: Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով գնահատված ապագա դրամական հոսքերը՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստները:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի գծով ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր միջնորդավճարները և գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը: Գործարքի գծով ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կամ հանած արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված սկզբնական և մարման ենթակա գումարների միջև տարբերության կուտակային ամորտիզացիան և, ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստով:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքն է նախքան ակնկալվող պարտքային կորուստների պահուստի գծով ճշգրտումը:

Տոկոսային եկամտի և ծախսի հաշվարկ

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկվում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության սկզբնական ճանաչման պահին: Տոկոսային եկամուտը և ծախսը հաշվարկելիս արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ (եթե ակտիվը պարտքային առումով արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ: Արդյունավետ տոկոսադրույքը վերանայվում է լողացող դրույքով գործիքների դրամական հոսքերի պարբերական վերագնահատման արդյունքում՝ շուկայական դրույքների փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո պարտքային առումով արժեզրկված դարձած ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվն այլևս չի համարվում պարտքային առումով արժեզրկված, տոկոսային եկամտի հաշվարկը կրկին իրականացվում է համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Սկզբնական ճանաչման պահին պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքն ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամտի հաշվարկը չի իրականացվում համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը նվազում է:

Տեղեկատվությունն այն մասին, թե որ դեպքերում են ֆինանսական ակտիվները համարվում պարտքային առումով արժեզրկված, ներկայացված է Ծանոթագրություն 4 (ե) (iv) կետում:

Ներկայացում

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտը ներառում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով տոկոսները:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված տոկոսային ծախսը ներառում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների գծով տոկոսային ծախսը:

(ե) Ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ

(i) Դասակարգում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Պարտքային գործիքը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու միջոցով և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Կազմակերպությունը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվելու պահանջները, որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա կվերացնի կամ էականորեն կնվազեցնի հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանար:

Կազմակերպությունն իր ֆինանսական ակտիվները դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող:

Գնահատում, արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար հատուցում և ներառում է շահույթի մարժան:

Գնահատելու համար, արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են, Կազմակերպությունը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այս դիտարկումը ներառում է այն գնահատումը, արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չբավարարի այս պայմանը:

Գնահատումն իրականացնելիս Կազմակերպությունը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական հոսքերի գումարը և ժամկետները,
- լծակավորման հատկանիշը,
- վաղաժամ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են Կազմակերպության պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական հոսքերով (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ակտիվների գծով պայմանավորվածությունների), և
- հատկանիշները, որոնք փոփոխում են փողի ժամանակային արժեքի համար հատուցումը, օրինակ՝ տոկոսադրույքների պարբերաբար վերասահմանումը:

Ֆինանսական պարտավորություններ

Կազմակերպությունն իր ֆինանսական պարտավորությունները դասում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների դասին:

Վերադասակարգում

Ֆինանսական պարտավորությունները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո:

(ii) Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Կազմակերպությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է դրամական հոսքեր ստանալու իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Կազմակերպությունը ոչ փոխանցում, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական ակտիվն ապաճանաչելիս ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի) և (i) ստացված հատուցման (ներառյալ ձեռք բերված որևէ նոր ակտիվ՝ հանած ստանձնած որևէ նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ արդյունքում ճանաչված կուտակային օգուտի կամ կորստի գումարի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ապաճանաչման պահանջները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվներում Կազմակերպության կողմից ստեղծված կամ պահպանված մասնակցությունը ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Գործարքներում, որոնցում Կազմակերպությունը ոչ պահպանում է, ոչ էլ փոխանցում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, և պահպանում է ակտիվի նկատմամբ հսկողությունը, Կազմակերպությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվն այդ ֆինանսական ակտիվում իր շարունակվող ներգրավվածության չափով, որն այն չափն է, որով Կազմակերպությունը ենթարկվում է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Ֆինանսական պարտավորություններ

Կազմակերպությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունն այն դեպքում, երբ իր պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

(iii) Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների վերափոխում

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները վերափոխվում են, Կազմակերպությունը գնահատում է, արդյոք վերափոխված ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի վերափոխում»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այդ դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ իրական արժեքով՝ գումարած պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումները:

Կազմակերպությունն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են վերափոխված կամ փոխարինված ֆինանսական ակտիվի դրամական հոսքերից: Կազմակերպությունը գնահատում է վերափոխման նշանակալի լինելը դիտարկելով քանակական և որակական գործոնները հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այդ գնահատումն իրականացնելիս Կազմակերպությունը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար օգտագործված ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Կազմակերպությունը եզրահանգում է, որ վերափոխումը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխություն, որը հանգեցնում է միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշի հետ անհամապատասխանությանը:

Եթե դրամական հոսքերի վերափոխումը պայմանավորված է փոխառուի ֆինանսական դժվարություններով, ապա որպես կանոն վերափոխման նպատակն է առավելագույն չափով վերականգնել ակտիվը պայմանագրի սկզբնական պայմաններով, այլ ոչ՝ սկզբնավորել նոր ակտիվ նշանակալիորեն տարբեր պայմաններով: Եթե Կազմակերպությունը մտադիր է այնպես վերափոխել ֆինանսական ակտիվը, որպեսզի ներվեն դրամական հոսքերը, ապա այն նախ դիտարկում է, արդյոք ակտիվի մի մասը պետք է դուրս գրվի նախքան վերափոխումը կատարելը (տես ստորև ներկայացված դուրսգրման քաղաքականությունը): Այդ մոտեցումն ազդում է քանակական գնահատման արդյունքի վրա և նշանակում է, որ ապաճանաչման չափանիշները միշտ չէ որ բավարարվում են նման դեպքերում: Կազմակերպությունն իրականացնում է նաև որակական գնահատում՝ վերափոխման նշանակալի լինելը գնահատելու համար:

Եթե ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի վերափոխումը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, Կազմակերպությունը նախ վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը, կիրառելով ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը, և արդյունքում առաջացող ճշգրտումը ճանաչում է որպես վերափոխումից օգուտ կամ կորուստ շահույթում կամ վնասում:

Եթե նման վերափոխումն իրականացվում է փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, ապա օգուտը կամ կորուստը ներկայացվում է արժեզրկումից կորուստների հետ միասին: Մյուս դեպքերում այն ներկայացվում է որպես արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտ:

Հաստատուն տոկոսադրույքով վարկերի համար, որոնց դեպքում փոխառուն հնարավորություն ունի վաղաժամ մարել վարկն անվանական արժեքով՝ առանց էական տուգանքի, Կազմակերպությունը հաշվառում է տոկոսադրույքի վերափոխումը մինչև ընթացիկ շուկայական տոկոսադրույքի մակարդակը՝ կիրառելով լողացող տոկոսադրույքով ֆինանսական գործիքների համար գործող ուղեցույցը: Սա նշանակում է, որ արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է առաջընթաց:

Ֆինանսական պարտավորություններ

Կազմակերպությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ վերափոխվում են վերջինիս պայմանները և երբ վերափոխված պարտավորության դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այդ դեպքում վերափոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և վերափոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վճարված հատուցումը ներառում է փոխանցված ոչ ֆինանսական ակտիվները (առկայության դեպքում) և ստանձնած պարտավորությունները, այդ թվում՝ նոր վերափոխված ֆինանսական պարտավորությունը:

Կազմակերպությունն իրականացնում է վերափոխման նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Կազմակերպությունը եզրահանգում է, որ վերափոխումը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման հնարավորության ներառում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները զուտ ստացված վճարներով և զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, նվազագույնը 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքից:

Եթե ֆինանսական պարտավորության վերափոխումը չի բավարարում ապաճանաչման պայմանները, պարտավորության ամորտիզացված արժեքը վերահաշվարկվում է, զեղչելով վերափոխված դրամական հոսքերը սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, և արդյունքում առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(iv) Արժեզրկում

Կազմակերպությունը ճանաչում է կորստի պահուստ ակնկալվող պարտքային կորուստների գծով պարտքային գործիքներ հանդիսացող և շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող ֆինանսական ակտիվների համար:

Կազմակերպությունը կորստի պահուստը չափում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորստներին հավասար գումարով, բացառությամբ այլ ֆինանսական գործիքների, որոնց գծով պարտքային ռիսկը նշանակալիորեն չի աճել սկզբնական ճանաչումից ի վեր, որոնց համար կորստի պահուստը չափվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից: Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում են 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ, դիտարկվում են որպես 1-ին փուլի ֆինանսական գործիքներ:

Ամբողջ ժամկետում պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են այն ակնկալվող պարտքային կորուստներ, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում: Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ, դիտարկվում են որպես 2-րդ փուլի ֆինանսական գործիքներ (եթե պարտքային ռիսկը նշանակալիորեն աճել է սկզբնական ճանաչումից ի վեր, բայց ֆինանսական գործիքները պարտքային առումով արժեզրկված չեն) և 3-րդ փուլի ֆինանսական գործիքներ (եթե ֆինանսական գործիքները պարտքային առումով արժեզրկված են):

Ակնկալվող պարտքային կորստների չափում

Ակնկալվող պարտքային կորուստները պարտքային կորուստների հավանականությամբ կշռված գնահատականն են և չափվում է հետևյալ կերպ.

- *ֆինանսական ակտիվներ, որոնք պարտքային առումով արժեզրկված չեն հաշվետու ամսաթվի դրությամբ*՝ որպես բոլոր դրամական պակասորդների ներկա արժեք (դրամական պակասորդը պայմանագրին համապատասխան Կազմակերպությանը հասանելիք դրամական հոսքերի և Կազմակերպության կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունն է),
- *ֆինանսական ակտիվներ, որոնք պարտքային առումով արժեզրկված են հաշվետու ամսաթվի դրությամբ*՝ որպես համախառն հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերություն,
- *չօգտագործված փոխառուվության հանձնառություններ*՝ որպես հետևյալ նշվածների միջև տարբերության ներկա արժեք՝ պայմանագրային դրամական հոսքերի, որոնք ենթակա են վճարման Կազմակերպությանը, եթե օգտագործվում է փոխառությունը ստանալու իրավունքը, և այն դրամական հոսքերի, որոնք Կազմակերպությունն ակնկալում է ստանալ:

Վերանայված պայմաններով ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները վերաբանակցվում են կամ փոփոխվում են կամ գոյություն ունեցող ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, գնահատվում է ֆինանսական ակտիվն ապաճանաչելու անհրաժեշտությունը (տես Ծանոթագրություն 4 (ե) (ii)), և ակնկալվող պարտքային կորուստները չափվում են հետևյալ կերպ.

- Եթե ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ակտիվի ապաճանաչմանը, ապա փոփոխված ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ակտիվի գծով դրամական պակասուրդի հաշվարկում:
- Եթե ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես գոյություն ունեցող ֆինանսական ակտիվից առաջացող վերջնական դրամական հոսքեր՝ վերջինիս ապաճանաչման ժամանակ: Այս գումարը ներառվում է գոյություն ունեցող ակտիվի գծով դրամական պակասուրդի հաշվարկում, որը զեղչվում է ապաճանաչման ակնկալվող ամսաթվից մինչև հաշվետու ամսաթիվը՝ կիրառելով գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը:

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Կազմակերպությունը գնահատում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները պարտքային առումով արժեզրկված լինելու տեսանկյունից: Ֆինանսական ակտիվը պարտքային առումով արժեզրկված է, եթե տեղի են ունցել մեկ կամ ավելի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն այդ ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկված լինելու ապացույցներից են հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտելի տվյալները.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, ինչպիսին է պարտազանցումը կամ ժամկետանց դառնալը,
- Կազմակերպության կողմից վարկի կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը Կազմակերպությունն այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- հավանականությունը, որ փոխառուն կսնկնանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի,
- արժեթղթի համար գործող շուկայի վերացումը ֆինանսական դժվարությունների պատճառով:

Վարկը, որի պայմանները վերաբանակցվել են փոխառուի վիճակի վատթարացման պատճառով, սովորաբար համարվում է պարտքային առումով արժեզրկված, եթե գոյություն չունի ապացույց, որ պայմանագրային դրամական հոսքերը չստանալու ռիսկը նշանակալիորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ: Բացի այդ, պարտքային առումով արժեզրկված են համարվում ավելի քան 90 օր ժամկետանց վարկերը:

Չեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Չեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման պահին պարտքային առումով արժեզրկված ակտիվներն են, մասնավորապես.

- Կազմակերպության կողմից թողարկված նոր ֆինանսական ակտիվներ պարտքային առումով արժեզրկված ակտիվի վերանայման շրջանակում (պարտքային առումով արժեզրկված ակտիվի փոխարինում պարտքային ռիսկի նմանատիպ մակարդակով մեկ այլ ակտիվով),
- ակտիվ, որն առաջացել է պայմանագրի պայմանների նշանակալի փոփոխության արդյունքում ֆինանսական ակտիվի ապաճանաչման հետևանքով՝ պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների վերանայման շրջանակում,
- ձեռք բերված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ,
- վարկերի տրամադրում «պարտազանցում» ներքին վարկանիշով վառկառուներին:

Չեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով չի ձևավորվում արժեզրկման գծով պահուստ սկզբնական ճանաչման պահին: Փոխարենը, ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների գումարը ներառվում է արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկում:

Չեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկի համար օգտագործվում են ակնկալվող դրամական հոսքերը՝ հաշվի առնելով է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների նախնական գնահատված գումարը: Ակտիվի պայմանագրային դրամական միջոցների գնահատված արժեքը նվազեցվում է իր գործողության ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների գումարով: Արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է պարտքային ռիսկի մասով:

Չեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների (սովորաբար սկզբնավորված ակտիվների) սկզբնական ճանաչման ժամանակ վարկերի իրական արժեքը որոշվում է դրամական ներհոսքերի և/կամ գրավի պարտադրված վաճառքի արդյունքում ակնկալվող դրամական հոսքերի հիման վրա:

Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստների հետագա գնահատումը միշտ իրականացվում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների գումարով: Այդ ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների փոփոխություններն ակտիվի սկզբնական ճանաչումից ի վեր: Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներում դրական փոփոխություններն արտացոլող գումարը ճանաչվում է որպես արժեզրկումից օգուտ, նույնիսկ եթե այդ փոփոխությունների գումարը գերազանցում է նախկինում շահույթում կամ վնասում որպես արժեզրկումից կորուստ ճանաչված գումարը:

Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով տոկոսները հաշվեգրվում են ամորտիզացված արժեքի գծով՝ ակտիվի սկզբնական ճանաչման պահին որոշված պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքով:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ակնկալվող պարտքային կորուստների գծով կորստի պահուստը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ.

- *ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ*՝ որպես նվազեցում ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից,
- *փոխառվության հանձնառություններ*՝ սովորաբար որպես պահուստ,
- *երբ ֆինանսական գործիքը ներառում է թե՛ օգտագործված և թե՛ չօգտագործված բաղադրիչ, և Կազմակերպությունը չի կարող նույնականացնել փոխառվության հանձնառության բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներն օգտագործված բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներից առանձին*՝ Կազմակերպությունը ներկայացնում է ընդհանուր կորստի պահուստ երկու բաղադրիչների համար: Ընդհանուր գումարը ներկայացվում է որպես նվազեցում օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքից: Կորստի պահուստի ավելցուկն օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ ներկայացվում է որպես պահուստ:

Դուրսգրումներ

Վարկերը և պարտքային արժեթղթերը դուրս են գրվում (ամբողջությամբ կամ մասնակիորեն), երբ գոյություն չունի ամբողջությամբ վերցրած ֆինանսական ակտիվը կամ դրա մի մասը վերականգնելու ողջամիտ ակնկալիք: Դուրսգրումը սովորաբար իրականացվում է այն դեպքում, երբ Կազմակերպությունը որոշում է, որ փոխառուն չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնցից կարող է ստանալ բավարար դրամական հոսքեր դուրսգրման ենթակա գումարները մարելու համար: Այս գնահատումն իրականացվում է առանձին յուրաքանչյուր ակտիվի համար:

Նախկինում դուրսգրված գումարների փոխհատուցումը ներառվում է «ֆինանսական գործիքների արժեզրկումից կորուստներ» հոդվածում՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

Դուրսգրված ֆինանսական ակտիվների գծով կարող են դեռևս կիրառվել հարկադիր միջոցներ՝ վճարման ենթակա գումարների վերադարձման Կազմակերպության ընթացակարգերի հետ համապատասխանություն ապահովելու համար:

(զ) Հաճախորդներին տրված վարկեր

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում «հաճախորդներին տրված վարկեր» հոդվածը ներառում է ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկերը (տես Ծանոթագրություն 4 (ե) (i)), որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի գծով լրացուցիչ ուղղակի ծախսումները, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

(է) Գուդվիլ

Դուստր կազմակերպության ձեռքբերման արդյունքում առաջացող գուդվիլը չափվում է սկզբնական արժեքով՝ հանած կուտակված արժեզրկումից կորուստները: Գուդվիլի արժեզրկումից կորուստը չի հակադարձվում:

(ը) Բաժնետիրական կապիտալ

(i) Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հարկերի:

(ii) Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Կազմակերպության կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:

Սովորական բաժնետոմսերի գծով շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակաշրջանում, երբ հայտարարվում են:

(թ) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված միավորների, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ սեփական կապիտալում:

(i) Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը հարկի այն գումարն է, որն ակնկալվում է վճարել կամ ստանալ տարվա հարկվող եկամտի կամ վնասի գծով՝ կիրառելով այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ներառում է նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումները:

(ii) Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկ չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման ժամանակ բիզնեսի միավորում չհանդիսացող գործարքի արդյունքում, որն ազդեցություն չունի ոչ հաշվապահական և ոչ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվներ ճանաչվում են չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային զեղչերի և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որով հավանական է, որ Կազմակերպությունն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Ապագա հարկվող շահույթը որոշվում է հարկվող ժամանակավոր տարբերությունների մարումից առաջացող գումարի հիման վրա: Եթե հարկվող ժամանակավոր տարբերությունների գումարը բավարար չէ հետաձգված հարկային ակտիվն ամբողջությամբ ճանաչելու համար, դիտարկվում է գոյություն ունեցող ժամանակավոր տարբերությունների մարումներով ճշգրտված ապագա հարկվող շահույթը, որը որոշվում է Կազմակերպության գործարար ծրագրերի հիման վրա: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի: Այս նվազեցումները վերականգնվում են, եթե մեծանում է ապագա հարկվող շահույթ ստանալու հավանականությունը:

Չճանաչված հետաձգված հարկային ակտիվները վերագնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճանաչվում են այն չափով, որով հավանական է, որ Կազմակերպությունն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց կարող է դրանք օգտագործվել:

Հետաձգված հարկը չափվում է օգտագործելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկի չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կառաջանան կախված այն եղանակից, որով Կազմակերպություն հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Կազմակերպությունն ունի ընթացիկ հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցելու իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից:

(ժ) Համախմբման հիմունքներ

(i) Բիզնեսի միավորումներ

Կազմակերպությունը հաշվառում է բիզնեսի միավորումը կիրառելով ձեռքբերման մեթոդը, երբ ձեռք բերված գործունեության և ակտիվների փոխկապակցված ամբողջությունը բավարարում է բիզնեսի միավորման սահմանմանը և հսկողությունը փոխանցվում է Կազմակերպությանը: Որոշելու համար, թե արդյոք գործունեության և ակտիվների փոխկապակցված կոնկրետ ամբողջությունը որակվում է որպես բիզնես, Կազմակերպությունը գնահատում է, արդյոք ձեռք բերված գործունեության և ակտիվների փոխկապակցված ամբողջությունը ներառում է նվազագույնը մուտքային գործոն և սկզբունքայնորեն նշանակալի գործընթաց և արդյոք ձեռք բերված ամբողջությունն ընդունակ է ստեղծել արդյունքներ:

Կազմակերպությունն ունի «համակենտրոնացման թեստ» իրականացնելու հնարավորություն, որը թույլ է տալիս պարզեցված կերպով գնահատել, արդյոք ձեռք բերված գործունեության և ակտիվների փոխկապակցված ամբողջությունը բիզնես չէ: Համակենտրոնացման կամընտիր թեստը համարվում է անցած, եթե ձեռք բերված համախառն ակտիվների ըստ էության ամբողջ իրական արժեքը համակենտրոնացած է մեկ որոշելի ակտիվում կամ համանման որոշելի ակտիվների խմբում:

Ձեռքբերման ժամանակ փոխանցված հատուցումը սովորաբար չափվում է իրական արժեքով, ինչպես և ձեռք բերված որոշելի զուտ ակտիվները: Առաջացած գուդվիլը ստուգվում է արժեզրկման տեսանկյունից տարեկան կտրվածքով: Գործարքի գծով ծախսումները ծախսագրվում են կատարվելու ժամանակ:

Փոխանցված հատուցումը չի ներառում գումարներ, որոնք վերաբերում են նախկինում գոյություն ունեցած հարաբերությունների կարգավորմանը: Այդ գումարները որպես կանոն ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ընդհանուր հսկողության ներքո գտնվող կազմակերպություններ կամ բիզնեսներ ընդգրկող բիզնեսի միավորումը այն բիզնեսի միավորումն է, որում միավորվող բոլոր կազմակերպություններին կամ բիզնեսներին ի վերջո հսկում է միևնույն կողմը կամ կողմերը թե՛ բիզնեսի միավորումից առաջ և թե՛ դրանից հետո, և այդ հսկողությունն անցողիկ (ժամանակավոր բնույթի) չէ:

Ընդհանուր հսկողության ներքո գտնվող կազմակերպությունների միավորման հետևանքները Կազմակերպության կողմից հաշվառվում են բաժնեմասի միավորման մեթոդով՝ պայմանով որ միավորվող ընկերությունների ակտիվներ և պարտավորությունները պետք է չափվեն միավորման ամսաթվի դրությամբ հաշվեկշռային արժեքով և փոխադարձ մնացորդները պետք է բացառվեն:

(ii) Դուստր կազմակերպություններ

Դուստր կազմակերպությունները Կազմակերպության կողմից հսկվող ընկերություններ են: Կազմակերպությունը հսկողություն ունի ընկերության նկատմամբ, եթե այդ ընկերությունում իր ներգրավվածության արդյունքում ունի փոփոխական հատույցների իրավունք կամ ռիսկին ենթարկվածություն և ընկերության նկատմամբ իր հսկողության միջոցով այդ հատույցների վրա ազդելու կարողություն: Կազմակերպությունը ներառում է դուստր կազմակերպության ֆինանսական հաշվետվություններն իր համախմբված ֆինանսական հաշվետվություններում դուստր կազմակերպության նկատմամբ հսկողություն ձեռք բերելու ամսաթվից մինչև իրավաբանորեն միաձուլվելու ամսաթիվը:

(iii) Համախմբման ընթացքում բացառվող գործառնություններ

Ներխմբային հաշվարկների մնացորդները և գործարքները, ինչպես նաև ներխմբային գործարքներից առաջացող ցանկացած չիրացված եկամուտները և ծախսերը բացառվում են:

(ի) Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ գործում են 2024թ. հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է այդ ստանդարտների վաղաժամ կիրառումը: Այնուամենայնիվ, այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Կազմակերպությունը ժամկետից շուտ չի կիրառել նոր կամ փոփոխված ստանդարտները:

(i) ՖՀՄՍ 18 «Տեղեկատվության ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում»

ՖՀՄՍ 18-ը կփոխարինի ՀՀՄՍ 1 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»* և կկիրառվի 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Նոր ստանդարտը ներկայացնում է հետևյալ հիմնական նոր պահանջները.

- Կազմակերպություններից պահանջվում է շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում բոլոր եկամուտները և ծախսերը դասակարգել ըստ հինգ դասերի՝ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, ընդհատված գործառնություններ և շահութահարկ: Կազմակերպություններից նաև պահանջվում է ներկայացնել նոր սահմանված գործառնական շահույթի ենթագումարը: Կազմակերպության զուտ շահույթը չի փոխվի:
- Ղեկավարության կողմից սահմանված կատարողականի չափորոշիչները բացահայտվում են ֆինանսական հաշվետվությունների մեկ ծանոթագրությունում:
- Տրվում է ընդլայնված ուղեցույց ֆինանսական հաշվետվություններում տեղեկատվությունը խմբավորելու վերաբերյալ:

Բացի այդ բոլոր կազմակերպություններից պահանջվում է օգտագործել գործառնական շահույթի ենթագումարը որպես մեկնարկային կետ դրամական հոսքերի մասին հաշվետվության համար՝ անուղղակի մեթոդով գործառնական գործունեության դրամական հոսքերը ներկայացնելիս:

Կազմակերպությունը դեռ գնահատում է նոր ստանդարտի ազդեցությունը, մասնավորապես, շահույթի կամ վնասի մասին հաշվետվության, դրամական հոսքերի մասին հաշվետվության կառուցվածքի և ղեկավարության կողմից սահմանված կատարողականի չափորոշիչների համար պահանջվող լրացուցիչ բացահայտումների հետ կապված: Կազմակերպությունը նաև գնահատում է ազդեցությունը ֆինանսական հաշվետվություններում տեղեկատվության խմբավորման վրա, այդ թվում այն հոդվածների համար, որոնք ներկայումս նշվում են որպես «այլ»:

(ii) Այլ հաշվապահական հաշվառման ստանդարտներ

Ստորև ներկայացված նոր կամ փոփոխված ստանդարտներն ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն չեն ունենա Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- Փոխանակման հնարավորության բացակայություն (ՀՀՄՍ 21-ի փոփոխություններ)
- Ֆինանսական գործիքների դասակարգում և չափում (ՖՀՄՍ 9-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ)

5 Զուտ տոկոսային եկամուտ

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով		
Հաճախորդներին տրված վարկեր	7,456,579	7,287,609
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	184,915	150,746
Ժամկետային ավանդներ	128,434	133,468
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	27,743	63,740
Ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր	2,556	37,540
	7,800,227	**7,673,103**
Տոկոսային ծախս		
Տոկոսային ծախս վարկերի և փոխառությունների գծով	222,646	496,082
Տոկոսային ծախս վարձակալության գծով պարտավորությունների գծով	43,578	72,063
	266,224	**568,145**

6 Զուտ այլ գործառնական եկամուտ

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Եկամուտ տույժերից և տուգանքներից	119,424	132,341
Եկամուտ շահած դատական գործերից	(7,395)	37,091
Վարկերի տրամադրման վճարների գծով պահուստի փոփոխություն	9,754	(76,906)
Զուտ օգուտ հիմնական միջոցների և այլ ակտիվների օտարումից	6,602	33,162
Այլ	38,840	53,941
	167,225	**179,629**

7 Ֆինանսական գործիքների արժեզրկումից կորուստների զուտ հակադարձում

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում գրանցված ֆինանսական գործիքների արժեզրկումից կորուստները:

	2024թ.				
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Չեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված**	**Ընդամենը**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,049	-	-	-	1,049
Բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներ	8,508	-	-	-	8,508
Հաճախորդներին տրված վարկեր	20,532	(35,283)	209,719	27,929	222,897
Ներդրումային արժեթղթեր	(6,847)	-	-	-	(6,847)
Այլ ակտիվներ	4,367	-	-	-	4,367
Չօգտագործված փոխատվության հանձնառություններ	14,458	-	-	-	14,458
Ընդամենը	**42,067**	**(35,283)**	**209,719**	**27,929**	**244,432**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում գրանցված ֆինանսական գործիքների արժեզրկումից կորուստները:

	2023թ.				
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Չեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված**	**Ընդամենը**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	3,757	-	-	-	3,757
Բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներ	11,997	-	-	-	11,997
Հաճախորդներին տրված վարկեր	18,849	(55,470)	314,734	(42,662)	235,451
Ներդրումային արժեթղթեր	(144,333)	-	-	-	(144,333)
Այլ ակտիվներ	(18,010)	-	-	-	(18,010)
Չօգտագործված փոխատվության հանձնառություններ	(14,458)	-	-	-	(14,458)
Ընդամենը	**(142,198)**	**(55,470)**	**314,734**	**(42,662)**	**74,404**

8 Անձնակազմի գծով ծախսեր

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Աշխատակիցների հատուցումներ	1,924,130	2,156,924
Այլ հատուցումներ	48,926	48,323
Առողջության ապահովագրություն	73,992	66,758
Օգուտ աշխատակիցներին շուկայականից ցածր տոկոսադրույքով տրված վարկերից	13,741	19,865
	2,060,789	**2,291,870**

9 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Մաշվածություն և ամորտիզացիա*	245,441	320,818
Վարկերի հավաքագրման գծով ծախսեր	171,051	176,968
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	106,573	36,746
Խորհրդի ծախսեր	84,647	79,812
Վերանորոգման և սպասարկման ծախսեր	75,112	149,374
Հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	64,227	132,094
Հիմնական ծրագրային ապահովման վճար	61,744	43,826
Մասնագիտական ծառայությունների գծով ծախսեր**	52,390	130,532
Կապի և տեղեկատվական ծառայություններ	48,919	55,767
Անվտանգության ծառայություն	39,751	47,466
Գրասենյակային պիտույքներ	15,207	16,610
Գործուղման ծախսեր	10,919	7,097
Գովազդի և շուկայավարման ծախսեր	9,768	22,284
Անձնակազմի վերապատրաստման ծախսեր	4,671	2,419
Ապահովագրություն	2,024	6,876
Այլ	25,930	45,471
	1,018,374	**1,274,160**

* 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա մաշվածության և ամորտիզացիայի կազմում ներառված 141,101 հազար դրամ գումարը (2023թ-ին՝ 191,970 հազար դրամ) վերաբերում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվների ամորտիզացիային (տես Ծանոթագրություն 17 (ա, բ)):

** 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա մասնագիտական ծառայությունների կազմում ներառված է Կազմակերպության ՓՀՄՍ համաձայն պատրաստված 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտի արժեքը՝ 20,000 հազար դրամի չափով (2023թ-ին՝ 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտի արժեքը՝ 27,000 հազար դրամի չափով և այլ ոչ աուդիտորական ծառայությունների արժեքը՝ 65,403 հազար դրամի չափով), որը վճարվել է/ենթակա է վճարման աուդիտորական կազմակերպությանը: Նշված գումարները ներկայացված են առանց ԱԱՀ:

10 Շահութահարկի գծով ծախս

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Ընթացիկ տարվա հարկի գծով ծախս	(908,016)	(839,889)
Պակաս ներկայացված նախորդ տարում	-	(12,253)
Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների փոփոխություններ՝ ժամանակավոր տարբերությունների առաջացման և հակադարձման արդյունքում	21,144	118,005
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	**(886,872)**	**(734,137)**

2024թ-ին ընթացիկ և հետաձգված հարկի համար կիրառելի դրույքաչափը կազմում է 18% (2023թ-ին՝ 18%):

Հարկի արդյունավետ դրույքաչափի համադրում դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2024թ. հազ. դրամ	%	2023թ. հազ. դրամ	%
Շահույթ մինչև հարկումը	4,824,648		3,788,869	
Շահութահարկ՝ հաշվարկված հարկի կիրառելի դրույքաչափով	(868,437)	(18.0)	(681,996)	(18.0)
Պակաս ներկայացված նախորդ տարում	-	-	(12,253)	(0.3)
Չնվազեցվող ծախսեր	(18,435)	(0.4)	(39,888)	(1.1)
	(886,872)	**(18.4)**	**(734,137)**	**(19.4)**

(ա) Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական հաշվետվություններում արտացոլելու նպատակով որոշված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերություններն առաջացնում են զուտ հետաձգված հարկային պարտավորություններ 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ստորև ներկայացված են ժամանակավոր տարբերությունների փոփոխությունները 2024թ. դեկտեմբերի 31-ին և 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում:

հազ. դրամ	**Մնացորդը առ 1 հունվարի 2024թ.**	**Շահույթում կամ վնասում ճանաչված**	**Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	223	(1,831)	(1,608)
Բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներ	(3,059)	2,223	(836)
Հաճախորդներին տրված վարկեր	(239,009)	45,273	(193,736)
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	9,944	(360)	9,584
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	60,272	(9,732)	50,540
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	(67,018)	9,255	(57,763)
Այլ ակտիվներ	(7,694)	7,729	35
Վարկեր և փոխառություններ	(165)	156	(9)
Վարձակալության գծով պարտավորություններ	75,874	(13,283)	62,591
Այլ պարտավորություններ	86,799	(18,286)	68,513
	(83,833)	**21,144**	**(62,689)**

հազ. դրամ	Մնացորդը առ 1 հունվարի 2023թ.	Ճահույթում կամ վնասում ճանաչված	Բիզնեսի միավորման արդյունքում ձեռք բերված (Ծնթգ. 15)	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(4,769)	6,513	(1,521)	223
Բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներ	1,143	(3,985)	(217)	(3,059)
Հաճախորդներին տրված վարկեր	(187,801)	129,921	(181,129)	(239,009)
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	94	9,850	-	9,944
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	(7,327)	67,599	60,272
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	(57,287)	14,965	(24,696)	(67,018)
Այլ ակտիվներ	(224)	(7,370)	(100)	(7,694)
Վարկեր և փոխառություններ	51	(4,422)	4,206	(165)
Վարձակալության գծով պարտավորություններ	65,710	(14,532)	24,696	75,874
Այլ պարտավորություններ	39,127	(5,608)	53,280	86,799
	(143,956)	**118,005**	**(57,882)**	**(83,833)**

11 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Կանխիկը դրամարկղում	**124,907**	**134,607**
Բանկային հաշիվների մնացորդներ		
– BB- վարկանիշով	294,317	208,383
– B+ վարկանիշով	474,826	59,432
– վարկանիշ չունեցող	141,211	735,120
Ընդամենը բանկային հաշիվների մնացորդներ	**910,354**	**1,002,935**
Դրամական միջոցների համարժեքներ		
Ժամկետային ավանդներ բանկերում՝ մինչ 90 օր սկզբնական մարման ժամկետով		
– վարկանիշ չունեցող	-	251,400
Ընդամենը ժամկետային ավանդներ բանկերում	-	**251,400**
Ընդամենը համախառն դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**1,035,261**	**1,388,942**
Պարտքային կորստի պահուստ	(154)	(1,203)
Ընդամենը զուտ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**1,035,107**	**1,387,739**

Վարկանիշները հիմնված են «Standard & Poor's» վարկանիշային գործակալության վարկանիշների վրա: Այլ գործակալությունների կողմից տրված վարկանիշները փոխարկվում են «Standard & Poor's»-ի համարժեք վարկանիշների: Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամկետանց չեն:

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն ամբողջությամբ դասված են 1-ին փուլ և չափվում են ամորտիզացված արժեքով 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Վարկանիշ չունեցող բանկային հաշիվների մնացորդները պահվում են 10 խոշոր հայկական բանկերում, և ղեկավարության գնահատմամբ այդ բանկերի վարկանիշը մոտավորապես համապատասխանում է «Standard & Poor's» վարկանիշային գործակալության B- -ից B+ վարկանիշին:

12 Բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներ

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Բանկերում տեղաբաշխված միջոցներ՝ 90 օրից ավել սկզբնական մարման ժամկետով		
Ժամկետային ավանդներ 10 խոշոր հայկական բանկերում		
– BB- վարկանիշով	1,120,564	853,556
– B+ վարկանիշով	208,686	450,291
– վարկանիշ չունեցող	-	652,355
Ընդամենը ժամկետային ավանդներ	**1,329,250**	**1,956,202**
Ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր		
– վարկանիշ չունեցող	-	199,740
Ընդամենը ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր	**-**	**199,740**
Ընդամենը բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված համախառն միջոցներ	**1,329,250**	**2,155,942**
Պարտքային կորստի պահուստ	(8,097)	(16,605)
Ընդամենը բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված զուտ միջոցներ	**1,321,153**	**2,139,337**

Վարկանիշները հիմնված են «Standard & Poor's» վարկանիշային գործակալության վարկանիշների վրա: Այլ գործակալությունների կողմից տրված վարկանիշները փոխարկվում են «Standard & Poor's»-ի համարժեք վարկանիշների: Բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցները ժամկետանց չեն:

Ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված բոլոր միջոցներն ամբողջությամբ դասված են 1-ին փուլ և չափվում են ամորտիզացված արժեքով 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ղեկավարության գնահատմամբ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկանիշ չունեցող գործիքների վարկանիշը մոտավորապես համապատասխանում է «Standard & Poor's» վարկանիշային գործակալության B- -ից B+ վարկանիշին:

13 Հաճախորդներին տրված վարկեր

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Փոքր ընկերություններին և անհատ ձեռնարկատերերին տրված վարկեր		
Բիզնես վարկեր	1,099,632	1,233,402
Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր	**1,099,632**	**1,233,402**
Ֆիզիկական անձանց տրված վարկեր		
Գյուղատնտեսական վարկեր	21,643,750	21,503,428
Սպառողական վարկեր	7,587,835	5,440,984
Ոսկու գրավով վարկեր	1,069,250	759,872
Անձնակազմին տրված վարկեր	195,009	294,612
Ընդամենը ֆիզիկական անձանց տրված վարկեր	**30,495,844**	**27,998,896**
Հաճախորդներին տրված համախառն վարկեր	**31,595,476**	**29,232,298**
Պարտքային կորստի պահուստ	(1,854,170)	(1,809,508)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	**29,741,306**	**27,422,790**

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է հաճախորդներին տրված վարկերի համախառն գումարների սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2024թ. դեկտեմբերի 31-ին և 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

հազ. դրամ	**2024թ.**				
	1-ին փուլ	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված**	**Ընդամենը**
Հաճախորդներին տրված վարկեր					
Մնացորդը առ 1 հունվարի	25,481,049	1,800,236	1,767,908	183,105	29,232,298
Սկզբնավորված նոր ակտիվներ	22,074,789	-	-	-	22,074,789
Տեղափոխում 1-ին փուլ	173,776	(143,408)	(30,368)	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(1,277,976)	1,330,906	(52,930)	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	(493,536)	(424,065)	917,601	-	-
Ամբողջությամբ մարված	(11,918,171)	(541,557)	(757,130)	(109,692)	(13,326,550)
Մասնակի մարված	(12,279,334)	(1,093,633)	(633,204)	(79,288)	(14,085,459)
Հաշվեգրված տոկոսներ	6,520,874	536,343	388,820	10,542	7,456,579
Օգուտ փոխարժեքային տարբերություններից	(20,852)	(4,082)	(4,931)	(2,946)	(32,811)
Ձեղչի ծախսագրում	-	-	423,558	-	423,558
Նախկինում դուրսգրված վարկերի վերադարձ	-	-	719,682	127,070	846,752
Դուրս գրված գումարներ	-	-	(869,910)	(123,770)	(993,680)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**28,260,619**	**1,460,740**	**1,869,096**	**5,021**	**31,595,476**

հազ. դրամ	2023թ.				
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված	Ընդամենը
Հաճախորդներին տրված վարկեր					
Մնացորդը առ 1 հունվարի	18,057,186	1,875,361	2,977,353	-	22,909,900
Բիզնեսի միավորման արդյունքում ձեռք բերված (Ծնթգ. 15)	7,784,851	-	-	315,082	8,099,933
Սկզբնավորված նոր ակտիվներ	21,909,776	-	-	-	21,909,776
Տեղափոխում 1-ին փուլ	122,680	(109,908)	(12,772)	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(1,423,931)	1,482,829	(58,898)	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	(868,856)	(382,039)	1,250,895	-	-
Ամբողջությամբ մարված	(13,898,869)	(813,262)	(534,780)	(38,573)	(15,285,484)
Մասնակի մարված	(12,656,689)	(1,002,626)	(648,400)	-	(14,307,715)
Չիջված վարկեր*	-	-	(818,857)	-	(818,857)
Հաշվեգրված տոկոսներ	6,407,365	742,213	95,369	42,662	7,287,609
Օգուտ փոխարժեքային տարբերություններից	47,536	7,668	15,603	-	70,807
Ջեղչի ծախսագրում	-	-	587,343	24,629	611,972
Նախկինում դուրսգրված վարկերի վերադարձ	-	-	651,515	-	651,515
Դուրս գրված գումարներ	-	-	(1,736,463)	(160,695)	(1,897,158)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**25,481,049**	**1,800,236**	**1,767,908**	**183,105**	**29,232,298**

* ՀՀ կառավարության 28.12.2023թ. N 2326-Ն որոշման համաձայն՝ Արցախի Հանրապետության ռեզիդենտներին տրված 1,169,796 հազար դրամ գումարով վարկերի և Արցախի Հանրապետության 364,971 հազար դրամ գումարով պետական պարտատոմսերի (Ծանոթագրություն 14) հետ կապված պահանջները զիջվել են 1,074,335 հազար դրամ գումարով թողարկված ՀՀ պետական պարտատոմսերի դիմաց:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է հաճախորդներին տրված վարկերի գծով կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2024թ. դեկտեմբերի 31-ին և 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

հազ. դրամ	**2024թ.**				
	1-ին փուլ	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված**	**Ընդամենը**
Հաճախորդներին տրված վարկեր					
Մնացորդը առ 1 հունվարի	235,291	439,394	1,110,194	24,629	1,809,508
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	142,918	-	-	-	142,918
Տեղափոխում 1-ին փուլ	54,530	(36,416)	(18,114)	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(11,696)	45,711	(34,015)	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	(5,243)	(105,239)	110,482	-	-
Կորստի պահուստի զուտ վերաչափում	(3,225)	310,393	425,202	81,764	814,134
Մարված ակտիվներ	(160,225)	(275,110)	(634,921)	(109,693)	(1,179,949)
Կորուստ փոխարժեքային տարբերություններից	(532)	(1,749)	(6,790)	-	(9,071)
Ձեղչի ծախսագրում	-	-	423,558	-	423,558
Նախկինում դուրսգրված վարկերի վերադարձ	-	-	719,682	127,070	846,752
Դուրս գրված գումարներ	-	-	(869,910)	(123,770)	(993,680)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**251,818**	**376,984**	**1,225,368**	**-**	**1,854,170**

հազ. դրամ	**2023թ.**				
	1-ին փուլ	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված**	**Ընդամենը**
Հաճախորդներին տրված վարկեր					
Մնացորդը առ 1 հունվարի	237,531	446,025	1,864,094	-	2,547,650
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	122,911	-	-	-	122,911
Տեղափոխում 1-ին փուլ	34,170	(26,054)	(8,116)	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(13,562)	51,880	(38,318)	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	(5,294)	(91,490)	96,784	-	-
Կորստի պահուստի զուտ վերաչափում	77,047	314,109	880,348	81,235	1,352,739
Մարված ակտիվներ	(218,807)	(258,639)	(1,195,082)*	(38,573)	(1,711,101)
Կորուստ փոխարժեքային տարբերություններից	1,295	3,563	8,089	-	12,947
Ձեղչի ծախսագրում	-	-	587,343	24,629	611,972
Նախկինում դուրսգրված վարկերի վերադարձ	-	-	651,515	-	651,515
Դուրս գրված գումարներ	-	-	(1,736,463)	(42,662)	(1,779,125)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**235,291**	**439,394**	**1,110,194**	**24,629**	**1,809,508**

* Գումարը ներառում է զիջված վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստները 428,938 հազար դրամի չափով:

(ա) Հաճախորդներին տրված վարկերի պարտքային որակը

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի պարտքային որակի վերաբերյալ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	1-ին փուլ հազ. դրամ	2-րդ փուլ հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	Չեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված հազ. դրամ	Ընդամենը վարկեր հազ. դրամ
Վարկեր փոքր ընկերություններին և անհատ ձեռնարկատերերին					
Բիզնես վարկեր					
– ոչ ժամկետանց	919,973	57,314	-	-	977,287
– մինչև 30 օր ժամկետանց	10,573	4,350	-	-	14,923
– 31-90 օր ժամկետանց	-	4,667	-	-	4,667
– 91-180 օր ժամկետանց	-	-	8,888	-	8,888
– ավելի քան 180 օր ժամկետանց	-	-	93,119	748	93,867
Ընդամենը համախառն բիզնես վարկեր	**930,546**	**66,331**	**102,007**	**748**	**1,099,632**
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	(11,383)	(16,948)	(74,226)	-	(102,557)
Ընդամենը զուտ բիզնես վարկեր	**919,163**	**49,383**	**27,781**	**748**	**997,075**
Վարկեր ֆիզիկական անձանց					
Գյուղատնտեսական վարկեր					
– ոչ ժամկետանց	19,146,888	832,535	-	1,110	19,980,533
– մինչև 30 օր ժամկետանց	152,310	47,119	-	-	199,429
– 31-90 օր ժամկետանց	-	175,355	-	-	175,355
– 91-180 օր ժամկետանց	-	-	217,124	176	217,300
– ավելի քան 180 օր ժամկետանց	-	-	1,070,210	923	1,071,133
Ընդամենը համախառն գյուղատնտեսական վարկեր	**19,299,198**	**1,055,009**	**1,287,334**	**2,209**	**21,643,750**
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	(168,193)	(267,807)	(848,292)	-	(1,284,292)
Ընդամենը զուտ գյուղատնտեսական վարկեր	**19,131,005**	**787,202**	**439,042**	**2,209**	**20,359,458**
Սպառողական վարկեր					
– ոչ ժամկետանց	6,829,158	246,491	-	1,367	7,077,016
– մինչև 30 օր ժամկետանց	50,589	20,919	-	-	71,508
– 31-90 օր ժամկետանց	-	42,903	-	-	42,903
– 91-180 օր ժամկետանց	-	-	56,933	-	56,933
– ավելի քան 180 օր ժամկետանց	-	-	339,050	425	339,475
Ընդամենը համախառն սպառողական վարկեր	**6,879,747**	**310,313**	**395,983**	**1,792**	**7,587,835**
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	(69,944)	(86,616)	(273,856)	-	(430,416)
Ընդամենը զուտ սպառողական վարկեր	**6,809,803**	**223,697**	**122,127**	**1,792**	**7,157,419**

	1-ին փուլ հազ. դրամ	2-րդ փուլ հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված հազ. դրամ	Ընդամենը վարկեր հազ. դրամ
Ոսկու գրավով վարկեր					
– ոչ ժամկետանց	978,864	11,558	-	-	990,422
– մինչև 30 օր ժամկետանց	5,656	222	-	-	5,878
– 31-90 օր ժամկետանց	-	2,761	1,754	-	4,515
– 91-180 օր ժամկետանց	-	-	4,488	-	4,488
– ավելի քան 180 օր ժամկետանց	-	-	63,675	272	63,947
Ընդամենը համախառն ոսկու գրավով վարկեր	**984,520**	**14,541**	**69,917**	**272**	**1,069,250**
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	(698)	(282)	(16,620)	-	(17,600)
Ընդամենը զուտ ոսկու գրավով վարկեր	**983,822**	**14,259**	**53,297**	**272**	**1,051,650**
Անձնակազմին տրված վարկեր					
– ոչ ժամկետանց	163,033	14,546	-	-	177,579
– մինչև 30 օր ժամկետանց	3,575	-	-	-	3,575
– 91-180 օր ժամկետանց	-	-	1,768	-	1,768
– ավելի քան 180 օր ժամկետանց	-	-	12,087	-	12,087
Ընդամենը համախառն անձնակազմին տրված վարկեր	**166,608**	**14,546**	**13,855**	**-**	**195,009**
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	(1,600)	(5,331)	(12,374)	-	(19,305)
Ընդամենը զուտ անձնակազմին տրված վարկեր	**165,008**	**9,215**	**1,481**	**-**	**175,704**
Ընդամենը համախառն վարկեր հաճախորդներին	**28,260,619**	**1,460,740**	**1,869,096**	**5,021**	**31,595,476**
Ընդամենը ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հաճախորդներին տրված վարկերի գծով	(251,818)	(376,984)	(1,225,368)	-	(1,854,170)
Ընդամենը զուտ վարկեր հաճախորդներին	**28,008,801**	**1,083,756**	**643,728**	**5,021**	**29,741,306**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի պարտքային որակի վերաբերյալ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	1-ին փուլ հազ. դրամ	2-րդ փուլ հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված հազ. դրամ	Ընդամենը վարկեր հազ. դրամ
Վարկեր փոքր ընկերություններին և անհատ ձեռնարկատերերին					
Բիզնես վարկեր					
– ոչ ժամկետանց	963,123	97,905	-	-	1,061,028
– մինչև 30 օր ժամկետանց	10,584	10,366	-	-	20,950
– 31-90 օր ժամկետանց	-	15,181	-	-	15,181
– 91-180 օր ժամկետանց	-	-	20,106	497	20,603
– ավելի քան 180 օր ժամկետանց	-	-	93,437	22,203	115,640
Ընդամենը համախառն բիզնես վարկեր	**973,707**	**123,452**	**113,543**	**22,700**	**1,233,402**
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	(14,081)	(35,681)	(82,259)	(3,053)	(135,074)
Ընդամենը զուտ բիզնես վարկեր	**959,626**	**87,771**	**31,284**	**19,647**	**1,098,328**
Վարկեր ֆիզիկական անձանց					
Գյուղատնտեսական վարկեր					
– ոչ ժամկետանց	18,816,077	910,033	-	3,571	19,729,681
– մինչև 30 օր ժամկետանց	154,959	82,356	-	402	237,717
– 31-90 օր ժամկետանց	-	219,586	-	-	219,586
– 91-180 օր ժամկետանց	-	-	306,923	267	307,190
– ավելի քան 180 օր ժամկետանց	-	-	907,313	101,941	1,009,254
Ընդամենը համախառն գյուղատնտեսական վարկեր	**18,971,036**	**1,211,975**	**1,214,236**	**106,181**	**21,503,428**
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	(166,527)	(289,511)	(749,438)	(14,282)	(1,219,758)
Ընդամենը զուտ գյուղատնտեսական վարկեր	**18,804,509**	**922,464**	**464,798**	**91,899**	**20,283,670**
Սպառողական վարկեր					
– ոչ ժամկետանց	4,634,129	301,640	-	363	4,936,132
– մինչև 30 օր ժամկետանց	46,311	12,210	-	-	58,521
– 31-90 օր ժամկետանց	-	72,280	-	353	72,633
– 91-180 օր ժամկետանց	-	-	114,666	-	114,666
– ավելի քան 180 օր ժամկետանց	-	-	232,206	26,826	259,032
Ընդամենը համախառն սպառողական վարկեր	**4,680,440**	**386,130**	**346,872**	**27,542**	**5,440,984**
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	(53,056)	(102,653)	(225,255)	(3,705)	(384,669)
Ընդամենը զուտ սպառողական վարկեր	**4,627,384**	**283,477**	**121,617**	**23,837**	**5,056,315**

	1-ին փուլ հազ. դրամ	2-րդ փուլ հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված հազ. դրամ	Ընդամենը վարկեր հազ. դրամ
Ոսկու գրավով վարկեր					
– ոչ ժամկետանց	582,229	35,210	-	-	617,439
– մինչև 30 օր ժամկետանց	13,890	5,419	-	-	19,309
– 31-90 օր ժամկետանց	-	16,015	-	-	16,015
– 91-180 օր ժամկետանց	-	-	30,006	-	30,006
– ավելի քան 180 օր ժամկետանց	-	-	50,421	26,682	77,103
Ընդամենը համախառն ոսկու գրավով վարկեր	**596,119**	**56,644**	**80,427**	**26,682**	**759,872**
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	(380)	(3,994)	(41,827)	(3,589)	(49,790)
Ընդամենը զուտ ոսկու գրավով վարկեր	**595,739**	**52,650**	**38,600**	**23,093**	**710,082**
Անձնակազմին տրված վարկեր					
– ոչ ժամկետանց	257,966	16,093	-	-	274,059
– մինչև 30 օր ժամկետանց	1,781	-	-	-	1,781
– 31-90 օր ժամկետանց	-	5,942	-	-	5,942
– ավելի քան 180 օր ժամկետանց	-	-	12,830	-	12,830
Ընդամենը համախառն անձնակազմին տրված վարկեր	**259,747**	**22,035**	**12,830**	**-**	**294,612**
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	(1,247)	(7,555)	(11,415)	-	(20,217)
Ընդամենը զուտ անձնակազմին տրված վարկեր	**258,500**	**14,480**	**1,415**	**-**	**274,395**
Ընդամենը համախառն վարկեր հաճախորդներին	**25,481,049**	**1,800,236**	**1,767,908**	**183,105**	**29,232,298**
Ընդամենը ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հաճախորդներին տրված վարկերի գծով	(235,291)	(439,394)	(1,110,194)	(24,629)	(1,809,508)
Ընդամենը զուտ վարկեր հաճախորդներին	**25,245,758**	**1,360,842**	**657,714**	**158,476**	**27,422,790**

(բ) Գրավի վերլուծություն

Հաճախորդի ընդհանուր վարկունակությունը վարկի որակի առավել կարևոր ցուցանիշն է: Այնուամենայնիվ, գրավը լրացուցիչ ապահովություն է տրամադրում, և Կազմակերպությունը որպես կանոն գրավ է պահանջում է վարկառուներից:

Իրավաբանական անձանց տրված վարկերը հիմնականում ապահովված են անշարժ գույքով և ֆիզիկական անձանց անձնական երաշխավորություններով:

Գյուղատնտեսական վարկերը ապահովված են անձնական երաշխավորություններով: Ոսկու գրավով վարկերը ապահովված են ոսկով: Սպառողական վարկերի կազմում ներառված վերանորոգման վարկերն ապահովված են անշարժ գույքով: Սպառողական վարկերն ապահովված են անձնական երաշխավորություններով կամ գրավով ապահովված չեն:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 3-րդ փուլ և որպես ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված դասված՝ հաճախորդներին տրված վարկերի համար որպես ապահովություն ծառայող գրավի վերաբերյալ: Գրավի իրական արժեքը գնահատվել է հաշվետու ամսաթվի դրությամբ:

	2024թ. հազ. դրամ	**2023թ. հազ. դրամ**
Ոսկի	53,570	61,693
Անշարժ գույք	3,379	10,186
Այլ գրավ	485	541
Ձեռք բերված ապրանքներ	385	1,766
Գրավով չապահովված	590,930	742,004
Ընդամենը 3-րդ փուլ դասված՝ հաճախորդներին տրված վարկեր	**648,749**	**816,190**

(գ) Գրավադրված ակտիվներ

Հաճախորդներին տրված վարկերը գրավադրված չեն վարկերի և փոխառությունների դիմաց (2023թ-ին չեն եղել վարկերի և փոխառությունների դիմաց գրավադրված հաճախորդներին տրված վարկեր) (տես Ծանոթագրություն 19):

(դ) Վարկային պորտֆելի աշխարհագրական և ըստ տնտեսության ճյուղերի վերլուծություն

Վարկերը տրամադրվել են Հայաստանի Հանրապետությունում գտնվող հաճախորդներին, որոնք իրենց գործունեությունն իրականացնում են տնտեսության ստորև ներկայացված ճյուղերում, ֆիզիկական անձանց տրված վարկերի համարը տնտեսության ճյուղը որոշվել է հիմք ընդունելով վարկի նպատակը տրամադրման պահին:

	2024թ. հազ. դրամ	**2023թ. հազ. դրամ**
Գյուղատնտեսություն	21,520,699	21,411,430
Առևտուր	760,886	851,157
Սննդի արդյունաբերություն	122,658	119,650
Թեթև արդյունաբերություն	60,347	81,005
Այլ	278,792	273,588
Ֆիզիկական անձանց տրված վարկեր՝ բացառությամբ գյուղատնտեսական վարկերի	8,852,094	6,495,468
Ընդամենը համախառն վարկեր հաճախորդներին	**31,595,476**	**29,232,298**
Պարտքային կորստի պահուստ	(1,854,170)	(1,809,508)
Ընդամենը զուտ վարկեր հաճախորդներին	**29,741,306**	**27,422,790**

(ե) Պարտքային ռիսկին ենթարկվածություն

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չունի որևէ վարկառու կամ կապակցված վարկառուների խմբեր (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդպիսի վարկառուներ չկային), որոնց վարկերի զուտ մնացորդները գերազանցում են Կազմակերպության սեփական կապիտալի 10%-ը:

(զ) Վարկերի մարման ժամկետներ

Վարկային պորտֆելը կազմող վարկերի մարման ժամկետների վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 22-ի (դ) կետում, որտեղ արտացոլված է հաշվետու ամսաթվից մինչև պայմանագրով նախատեսված վարկերի մարման ժամկետը մնացած ժամանակահատվածը:

14 Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր		
Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսեր՝ BB- վարկանիշով	1,757,036	1,016,197
Corporate bonds		
− BB- վարկանիշով	401,380	302,536
− B+ վարկանիշով	-	101,921
− վարկանիշ չունեցող	204,022	-
Ընդամենը համախառն ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	**2,362,438**	**1,420,654**
Պարտքային կորստի պահուստ	(11,991)	(5,144)
Ընդամենը զուտ ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	**2,350,447**	**1,415,510**

Վարկանիշները հիմնված են «Standard & Poor's» վարկանիշային գործակալության վարկանիշների վրա: Այլ գործակալությունների կողմից տրված վարկանիշները փոխարկվում են «Standard & Poor's»-ի համարժեք վարկանիշների:

Ղեկավարության գնահատմամբ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկանիշ չունեցող գործիքների վարկանիշը մոտավորապես համապատասխանում է «Standard & Poor's» վարկանիշային գործակալության B+ վարկանիշին:

Ներդրումային արժեթղթերն ամբողջությամբ դասված են 1-ին փուլ և չափվում են ամորտիզացված արժեքով 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ներդրումային արժեթղթերի ընդհանուր գումարի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

հազ. դրամ	2024թ. 1-ին փուլ	2023թ. 1-ին փուլ
Ներդրումային արժեթղթեր		
Մնացորդը առ 1 հունվարի	1,420,654	3,190,926
ՀՀ կառավարության պետական պարտատոմսեր՝ համաձայն N 2326-Ն որոշման (Ծնթգ. 13)	-	1,074,335
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	1,901,056	292,099
Տեղափոխում 1-ին փուլ	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	-	-
Մարված ակտիվներ	(1,010,000)	(2,722,222)
Չիջված ակտիվներ	-	(255,480)
Ստացված տոկոսներ	(134,187)	(142,121)
Հաշվեգրված տոկոսներ	184,915	150,746
Վնաս սկզբնական ճանաչման պահին	-	(58,138)
Դուրս գրված գումարներ (Ծնթգ. 13)	-	(109,491)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**2,362,438**	**1,420,654**

15 Դուստր կազմակերպության ձեռքբերում

2023թ. հունվարի 20-ին Կազմակերպությունը ձեռք էր բերել «ՍԵՖ Ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ-ի բաժնետոմսերի 100%-ը 2,295,000 հազար դրամով, որը վճարվել էր դրամական միջոցներով: Ձեռքբերումից հետո՝ 2023թ. սեպտեմբերին «ՍԵՖ Ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ-ն իրավաբանորեն միաձուլվեց Կազմակերպության հետ: Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս գործարքը հաշվառվել է որպես բիզնեսի միավորում:

«ՍԵՖ Ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ-ի հիմնական գործունեությունը միկրոֆինանսական, անհատական բիզնես վարկերի և սպառողական վարկերի տրամադրումն էր: Կազմակերպության գործունեությունը կարգավորվում էր ՀՀ կենտրոնական բանկի կողմից: Կազմակերպությունն ուներ վարկային կազմակերպության լիցենզիա:

«ՍԵՖ Ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ-ի նկատմամբ հսկողություն ձեռք բերելը հնարավորություն է տալիս Կազմակերպությանն ընդլայնել իր վարկավորման գործառնությունները և ամրապնդել շուկայի իր մասնաբաժինը «ՍԵՖ Ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ-ի հաճախորդների բազայի հասանելիության միջոցով:

Ձեռքբերման ամսաթվից մինչև միաձուլման ամսաթիվն ընկած ութ ամիսների ընթացքում Կազմակերպության գործունեության արդյունքներում դուստր կազմակերպության ներդրումը եղել է 1,439,001 հազար դրամ գումարով տոկոսային եկամուտ և 133,001 հազար դրամ գումարով շահույթ: Եթե ձեռքբերումը տեղի ունենար 2024թ. հունվարի 1-ին, ղեկավարության գնահատմամբ տարվա տոկոսային եկամտի ընդհանուր գումարը կլիներ 143,690 հազար դրամով ավելի, իսկ տարվա շահույթը՝ 19,295 հազար դրամով ավելի: Այդ գումարները որոշելիս ղեկավարությունը ենթադրել է, որ 2024թ. հունվարի 1-ի դրությամբ իրական արժեքի ճշգրտումները նույնը կլինեին, ինչ ճշգրտումները, որոնք առաջացել էին ձեռքբերման ամսաթվին:

Ձեռք բերված որոշելի ակտիվներ և ստանձնած պարտավորություններ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են ձեռք բերված ակտիվների և ստանձնած պարտավորությունների ճանաչված գումարները ձեռքբերման ամսաթվի դրությամբ:

հազ. դրամ	Ծնթգ.	Ձեռքբերման ամսաթվի դրությամբ ճանաչված իրական արժեք
Ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		597,387
Բանկերում տեղաբաշխված միջոցներ		607,192
Հաճախորդներին տրված վարկեր*	13	8,099,933
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	16	64,865
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	17(ա)	85,805
Այլ ակտիվներ		67,944
Պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	19	(5,952,291)
Հետաձգված հարկային պարտավորություններ	10(ա)	(57,882)
Վարձակալության գծով պարտավորություններ	17(դ)	(102,404)
Այլ պարտավորություններ		(382,861)
Ընդամենը որոշելի ձեռք բերված զուտ ակտիվներ		**3,027,688**
Դրամական միջոցներով վճարված հատուցում		2,295,000
Դուստր կազմակերպությունից ստացվելիք փոխառություններ		760,476
Ստացված դրամական միջոցներ		597,387
Դրամական միջոցների արտահոսք 2022թ-ին		**(2,295,000)**
Դրամական միջոցների արտահոսք 2023թ-ին		**597,387**
Գուդվիլ		**27,788**

* Հաճախորդներին տրված վարկերի՝ պայմանագրով նախատեսված ընդհանուր գումարը կազմում էր 8,099,915 հազար դրամ, որից 544,945 հազար դրամը կազմում էին ակնկալվող պարտքային կորուստները ձեռքբերման ամսաթվի դրությամբ:

Գուդվիլը հիմնականում վերագրվում է այն սիներգիաներին, որոնք ակնկալվում է ստեղծել դուստր կազմակերպությունը Կազմակերպության գործող բիզնեսին ինտեգրելու արդյունքում:

Իրական արժեքի չափում

Ձեռք բերված ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը չափելու համար օգտագործվել են գնահատման հետևյալ մեթոդները.

Ձեռք բերված ակտիվներ	Մակարդակ	Գնահատման մեթոդ
Հաճախորդներին տրված վարկեր	*3-րդ մակարդակ*	*Զեղչված դրամական հոսքերի մեթոդ.* Իրական արժեքը որոշվում է նմանատիպ գործիքների շուկայական տոկոսադրույքների և պայմանագրային դրամական հոսքերի հիման վրա: Արտարժույթով և ՀՀ դրամով տրամադրված վարկերի համար կիրառվում են 34%-69% զեղչման դրույքներ՝ հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գծով ապագա դրամական հոսքերը զեղչելու համար: Պարտքային առումով արժեզրկված վարկերի համար իրական արժեքը չափվում է այդ վարկերի ակնկալվող վերադարձման 15.8%-41.4% դրույքների հիման վրա:

Ոչ նյութական ակտիվներ	*3-րդ մակարդակ*	*Մաշեցված փոխարինման արժեքի մեթոդ.* Ֆունկցիոնալ և տնտեսական հնացածության ճշգրտումները գնահատվել են զեղչված դրամական հոսքերի հիման վրա:
Վարկեր և փոխառություններ	*3-րդ մակարդակ*	*Զեղչված դրամական հոսքերի մեթոդ.* Իրական արժեքը որոշվում է նմանատիպ գործիքների շուկայական տոկոսադրույքների և պայմանագրային դրամական հոսքերի հիման վրա: Արտարժույթով տրամադրված փոխառությունների համար կիրառվում են 7.0%-8.6% զեղչման դրույքներ, իսկ ՀՀ դրամով տրամադրված փոխառությունների համար կիրառվում են 12.2%-12.9% զեղչման դրույքներ՝ վարկերի և փոխառությունների գծով ապագա դրամական հոսքերը զեղչելու համար:

Բացառությամբ վերը նշված ակտիվների և պարտավորությունների դասերի, ղեկավարությունը գնահատմամբ ձեռքբերման ամսաթվի դրությամբ այլ ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է դրանց հաշվեկշռային արժեքին:

16 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

հազ. դրամ	Շենքեր	Փոխադրա-միջոցներ	Կապի սարքավո-րումներ և համակար-գիչներ	Գրասենյա-կային սարքավո-րումներ և գույք	Համակարգ-չային ծրագրեր	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք							
Մնացորդը առ 1 հունվարի 2024թ.	457,424	132,020	346,655	79,252	151,801	84,929	1,252,081
Ավելացումներ	2,065	17,777	16,285	4,089	32,770	8,050	81,036
Օտարումներ	-	-	(77,974)	(6,597)	(6,335)	(21,972)	(112,878)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	**459,489**	**149,797**	**284,966**	**76,744**	**178,236**	**71,007**	**1,220,239**
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա							
Մնացորդը առ 1 հունվարի 2024թ.	(289,386)	(82,029)	(265,886)	(62,473)	(131,014)	(40,374)	(871,162)
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	(22,925)	(12,874)	(30,499)	(6,587)	(30,323)	(9,255)	(112,463)
Օտարումներ	-	-	77,839	5,814	4,818	17,519	105,990
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	**(312,311)**	**(94,903)**	**(218,546)**	**(63,246)**	**(156,519)**	**(32,110)**	**(877,635)**
Հաշվեկշռային արժեք Առ 31 դեկտեմբերի 2024թ.	**147,178**	**54,894**	**66,420**	**13,498**	**21,717**	**38,897**	**342,604**
Սկզբնական արժեք							
Մնացորդը առ 1 հունվարի 2023թ.	457,424	158,657	360,974	87,856	126,263	84,819	1,275,993
Ավելացումներ	-	-	3,099	643	16,147	10,421	30,310
Ձեռք բերված բիզնեսի միավորման արդյունքում (Ծնթգ. 15)	-	4,615	22,015	5,470	9,002	23,763	64,865
Տեղափոխումներ	-	-	(1,110)	731	389	(10)	-
Օտարումներ	-	(31,252)	(38,323)	(15,448)	-	(34,064)	(119,087)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	**457,424**	**132,020**	**346,655**	**79,252**	**151,801**	**84,929**	**1,252,081**
Մաշվածություն և ամորտիզացիա							
Մնացորդը առ 1 հունվարի 2023թ.	(266,514)	(93,860)	(259,526)	(68,452)	(110,009)	(58,957)	(857,318)
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	(22,872)	(18,624)	(44,651)	(7,974)	(20,616)	(14,111)	(128,848)
Տեղափոխումներ	-	-	1,110	(731)	(389)	10	-
Օտարումներ	-	30,455	37,181	14,684	-	32,684	115,004
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	**(289,386)**	**(82,029)**	**(265,886)**	**(62,473)**	**(131,014)**	**(40,374)**	**(871,162)**
Հաշվեկշռային արժեք Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**168,038**	**49,991**	**80,769**	**16,779**	**20,787**	**44,555**	**380,919**

2024թ-ին չեն եղել հիմնական միջոցների ձեռքբերմանը կամ կառուցմանը վերաբերող կապիտալացված փոխառության ծախսումներ (2023թ-ին այդպիսի ծախսումներ չեն եղել):

17 Վարձակալություն

Կազմակերպությունը վարձակալում է ակտիվներ, մասնավորապես, գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի տարածքները, որոնց վարձակալության ժամկետը կազմում է 10 տարի:

Ստորև ներկայացված է այն վարձակալությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց շրջանակում Կազմակերպությունը հանդես է գալիս որպես վարձակալ:

(ա) Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Մնացորդը առ 1 հունվարի	372,321	318,256
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների ավելացումներ և վերափոխումներ	172,244	442,959
Դուստր կազմակերպության ձեռքբերում (Ծնթգ. 15)	-	85,805
Տարվա մաշվածության գումար	(132,978)	(191,970)
Ավարտված վարձակալության պայմանագրեր	(90,683)	(282,729)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**320,904**	**372,321**

(բ) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների մաշվածություն	132,978	191,970
Վարձակալության գծով պարտավորությունների գծով տոկոսներ	43,578	72,063
Կարճաժամկետ վարձակալություններին վերաբերող ծախսեր	106,573	36,746

(գ) Դրամական հոսքերի մասին հաշվետվությունում ճանաչված գումարներ

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Ընդամենը դրամական միջոցների արտահոսք վարձակալության գծով	177,176	266,448
Կարճաժամկետ վարձակալություններ՝ ներառված «Այլ ընդհանուր վարչական ծախսերի վճարումներ» հոդվածում	106,573	36,746

(դ) Պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի փոփոխությունների համադրում

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Մնացորդը առ 1 հունվարի	421,518	375,521
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ		
Վճարումներ	(133,598)	(194,385)
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ	**(133,598)**	**(194,385)**
Այլ փոփոխություններ		
Վարձակալության գծով պարտավորությունների ավելացումներ և վերափոխումներ	172,244	442,959
Բիզնեսի միավորման արդյունքում ձեռք բերված	-	102,404
Տոկոսային ծախս	43,578	72,063
Վճարված տոկոսներ	(43,578)	(72,063)
Ավարտված վարձակալության պայմանագրեր	(118,920)	(304,981)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**341,244**	**421,518**

18 Այլ ակտիվներ

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Դեբիտորական պարտքեր, համախառն գումար	41,959	110,237
Պարտքային կորստի պահուստ	(1,536)	(5,903)
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	**40,423**	**104,334**
Կանխավճարներ	53,638	57,908
Աշխատակիցների հետաձգված հատուցումներ	20,341	35,146
Առգրավված ակտիվներ	12,629	13,169
Պաշարներ	5,915	7,995
Ընդամենը այլ ոչ ֆինանսական ակտիվներ	**92,523**	**114,218**
Ընդամենը այլ ակտիվներ	**132,946**	**218,552**

Այլ ֆինանսական ակտիվներն ամբողջությամբ դասված են 1-ին փուլ և չափվում են ամորտիզացված արժեքով 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

19 Վարկեր և փոխառություններ

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն ամորտիզացված արժեքով չափվող Կազմակերպության տոկոսակիր վարկերի և փոխառությունների պայմանագրային պայմանների վերաբերյալ: Տոկոսադրույքի, արժութային և իրացվելիության ռիսկերին Կազմակերպության ենթարկվածության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 22-ի (դ) կետում:

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Գրավով չապահովված փոխառություններ բաժնետիրոջից	2,105,031	2,104,107
Գրավով չապահովված վարկեր միջազգային ֆինանսական կազմակերպություններից	-	985,934
Ընդամենը վարկեր և փոխառություններ	**2,105,031**	**3,090,041**

(ա) Պայմանները և մարման ժամանակացույցը

Ստորև ներկայացված են վարկերի և փոխառությունների պայմանները:

հազ. դրամ				**31 դեկտեմբերի 2024թ.**		**31 դեկտեմբերի 2023թ.**	
	Արժույթ	**Անվանակ. տոկոսադր.**	**Մարման տարի**	**Անվանակ. արժեք**	**Հաշվեկշռ. արժեք**	**Անվանակ. արժեք**	**Հաշվեկշռ. արժեք**
Գրավով չապահովված փոխառություններ բաժնետիրոջից	ՀՀ դրամ	10%	2025	2,105,031	2,105,031	2,104,107	2,104,107
Գրավով չապահովված վարկեր միջազգային ֆինանսական կազմակերպություններից	ԱՄՆ դոլար	6.74%-7.22%	2024	-	-	857,864	856,962
Գրավով չապահովված վարկեր միջազգային ֆինանսական կազմակերպություններից	ՀՀ դրամ	14.72%	2024	-	-	129,116	128,972
Ընդամենը տոկոսակիր պարտավորություններ				**2,105,031**	**2,105,031**	**3,091,087**	**3,090,041**

(բ) Պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի փոփոխությունների համադրում

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Մնացորդը առ 1 հունվարի	3,090,041	2,504,918
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ		
Ստացված	-	650,000
Վճարված	(946,334)	(5,895,883)
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ	**(946,334)**	**(5,245,883)**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը	**(26,392)**	**8,528**
Ձեռք բերված բիզնեսի միավորման արդյունքում (Ծնթգ. 15)	-	5,952,291
Տոկոսային ծախս	222,646	496,082
Վճարված տոկոսներ	(234,930)	(625,895)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**2,105,031**	**3,090,041**

(գ) Կովենանտներ

Որպես դուստր կազմակերպության իրավահաջորդ՝ Կազմակերպությունից պահանջվում էր համապատասխանել միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված վարկային պայմանագրերի որոշակի կովենանտներին, այլապես վարկերը ենթակա կլինեին մարման ըստ պահանջի: Այդ կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերը ներառում էին նաև հակընդդեմ պարտազանցման մասին դրույթ՝ Կազմակերպության կողմից ստացված այլ վարկերի կովենանտների խախտման դեպքում: 2023թ. դեկտեմբերի 31-ին Խումբը խախտել էր վարկային պորտֆելի որակին վերաբերող որոշ կովենանտներ, և հաշվի առնելով, որ միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված բոլոր վարկերը ենթակա էին մարման մինչև 2024թ. հունիսը, վարկատուները չեն հրաժարվել վարկերի ըստ պահանջի մարումը պահանջելու իրենց իրավունքից: Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերը ներկայացվել էին որպես ըստ պահանջի մարման ենթակա (Ծանոթագրություն 22 (i, դ)) 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այդ վարկերն ամբողջությամբ մարվել էին 2024թ. ընթացքում: 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ստացված փոխառությունները կովենանտներ չունեին:

20 Այլ պարտավորություններ

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Ծառայությունների և ապրանքների համար վճարվելիք գումարներ	39,769	38,518
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	**39,769**	**38,518**
Վճարվելիք պարգևավճարներ	186,611	181,435
Չօգտագործված արձակուրդի պահուստ	184,755	164,397
Վարկերի տրամադրման վճարների գծով պահուստ	60,739	205,111
Վճարվելիք հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	28,100	48,864
Աշխատակիցներին վճարվելիք աշխատավարձ	-	45,735
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ փոխատվության հանձնառությունների գծով	-	14,458
Այլ պարտավորություններ	881	1,076
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	**461,086**	**661,076**
Ընդամենը այլ պարտավորություններ	**500,855**	**699,594**

21 Բաժնետիրական կապիտալ և պահուստներ

(ա) Թողարկված կապիտալ և էմիսիոն եկամուտ

Հայտարարված, թողարկված և շրջանառության մեջ գտնվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 17,225 սովորական բաժնետոմսից (2023թ-ին՝ 17,225 սովորական բաժնետոմսից): Բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքը կազմում է 200,000 դրամ (2023թ-ին՝ 200,000 դրամ):

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ստանալ ժամանակ առ ժամանակ հայտարարվող շահաբաժինները և քվեարկել Կազմակերպության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

(բ) Շահաբաժիններ

Վճարման ենթական շահաբաժինները սահմանափակվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված Կազմակերպության չբաշխված շահույթի առավելագույն չափով:

2024թ. ընթացքում Կազմակերպությունը հայտարարել է 850,000 հազար դրամ գումարով շահաբաժիններ, որից շահաբաժիններ չեն վճարել 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (2023թ-ին հայտարարվել էին 711,148 հազար դրամ գումարով շահաբաժիններ, որից շահաբաժիններ չէին վճարել 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ): 2023թ-ին հայտարարված շահաբաժիններն ամբողջությամբ վճարվել էին 2024թ-ին: Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահաբաժինները կազմել են 49,347 հազար դրամ (2023թ-ին՝ 41,286 հազար դրամ):

22 Ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարումը հիմնարար նշանակություն ունի վարկավորման գործունեության համար և կազմում է Կազմակերպության գործառնությունների կենսական տարրը: Շուկայական, պարտքային, և իրացվելիության ռիսկերն այն հիմնական ռիսկերն են, որոնց ենթարկվում է Կազմակերպությունը:

(ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Կազմակերպությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և հսկողության մեխանիզմներ, ինչպես նաև անընդհատ հսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող պրոդուկտների ու ծառայությունների փոփոխությունները և ընդունված լավագույն պրակտիկան արտացոլելու նպատակով:

Տնօրենների խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման համակարգի աշխատանքի, առանցքային ռիսկերի կառավարման գործընթացի հսկողության, ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման և խոշոր գործարքների հաստատման համար:

Ղեկավարությունը պատասխանատու է ռիսկերի մեղմացմանն ուղղված միջոցառումների հսկողության և իրականացման և ռիսկերի համար սահմանված սահմանաչափերում Կազմակերպության գործունեության իրականացումն ապահովելու համար:

Պարտքային, շուկայական և իրացվելիության ռիսկերը թե՛ պորտֆելի և թե՛ առանձին գործառնությունների մակարդակով կառավարվում և վերահսկվում են Վարկային կոմիտեների համակարգի, Գործառնությունների բաժնի ղեկավարների, Ֆինանսական մենեջերի և Ֆինանսական տնօրենի կողմից: Որոշումների կայացմանը գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ ղեկավարությունը ստեղծել է վարկային կոմիտեների հիերարխիա՝ կախված ռիսկին ենթարկվածության տեսակից և չափից:

Կազմակերպության ներքին փաստաթղթերի համաձայն՝ ներքին աուդիտի բաժինը հաճախ պատրաստում են Կազմակերպության նշանակալի ռիսկերի կառավարմանն անդրադարձող հաշվետվություններ: Հաշվետվությունները ներառում են դիտարկումներ Կազմակերպության ընթացակարգերի և մեթոդաբանության արդյունավետության գնահատման վերաբերյալ և առաջարկություններ դրանց բարելավման ուղղությամբ:

Ռիսկի թե՛ արտաքին և թե՛ ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են Կազմակերպության ներսում: Կազմակերպությունը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկերի մեղմացմանն ուղղված ընթացիկ միջոցառումների նպատակահարմարության որոշմանը:

(բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը չի կատարում իր պայմանագրային պարտականությունները: Կազմակերպությունում գործում են պարտքային ռիսկին ենթարկվածությունը կառավարող քաղաքականություն և ընթացակարգեր (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված պայմանագրային հանձնառությունների համար), ներառյալ պորտֆելի գծով ռիսկի կենտրոնացումը սահմանափակելու վերաբերյալ ուղեցույցները և Վարկային կոմիտեի ստեղծումը՝ պարտքային ռիսկն ակտիվորեն վերահսկելու նպատակով: Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է ղեկավարության կողմից:

Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունը սահմանում է՝

- վարկային դիմումների ուսումնասիրման և հաստատման ընթացակարգերը,
- վարկառուների վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- պայմանագրային կողմերի, թողարկողների և ապահովագրական ընկերությունների վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- գրավի գնահատման մեթոդաբանությունը,
- վարկերի փաստաթղթավորման պահանջները,
- վարկերի և այլ գործիքների, որոնց գծով Կազմակերպությունը ենթարկվում է պարտքային ռիսկի, շարունակական հսկողության ընթացակարգերը:

Պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը, որպես կանոն, արտացոլվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և չճանաչված պայմանագրային հանձնառությունների գումարներում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ վարկային ռիսկի նվազեցման վրա:

Որպես կանոն գրավ չի պահանջվում ածանցյալ բանկերին մնացորդների համար: Հաճախորդներին տրված վարկերի գրավի վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 13-ի (բ) կետում:

Պարտքային ռիսկ. ակնկալվող պարտքային կորստների գումարները

Արժեզրկման գնահատման համար օգտագործվող ելակետային տվյալներ, ենթադրություններ և մեթոդներ

Տես հաշվապահական հաշվառման քաղաքականությունը Ծանոթագրություն 4 (ե) (iv) կետում:

Պարտքային ռիսկի նշանակալի աճ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Կազմակերպությունը գնահատում է, արդյոք տեղի է ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր: Որոշելու համար, թե արդյոք ֆինանսական գործիքի գծով պարտազանցման ռիսկը նշանակալիորեն աճել է սկզբնական ճանաչումից ի վեր, Կազմակերպությունը դիտարկում է ողջամիտ և հիմնավորվող տեղեկատվությունը, որը տեղին է և հասանելի առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի: Գնահատումը ներառում է քանակական և որակական տվյալները՝ Կազմակերպության անցյալ ժամանակաշրջանների փորձի և փորձագետների գնահատումների հիման վրա: Կազմակերպությունը համարում է, որ հաճախորդներին տրված վարկերի գծով տեղի է ունենում պարտքային ռիսկի նշանակալի ոչ ուշ, քան այն ժամանակ, երբ վարկերը դառնում են ավելի քան 30 օր ժամկետանց: Ժամկետանց օրերը որոշվում են՝ հաշվելով օրերի քանակը, որոնք անցել են այն ամենավաղ ասաթվից ի վեր, որին վճարումն ամբողջությամբ չի ստացվել: Վճարման ժամկետները որոշվում են առանց հաշվի առնելու արտոնյալ ժամկետը, որին վարկառուն կարող է իրավունք ունենալ:

Պարտքային ռիսկի աճը գնահատելիս Կազմակերպությունը դիտարկում է նաև հետևյալ գործոնները՝

- տվյալ վարկառուի կողմից Հայաստանի այլ ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերի ավելի քան 90 օր ժամկետանց լինելը,
- վարկառուի ֆինանսական դժվարությունները,
- վարկի պայմանների վերանայումը վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացման պատճառով,
- գյուղատնտեսական ռիսկերի աճ:

Եթե կան ապացույցներ, որ այլևս տեղի չի ունենում պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, գործիքի գծով պարտքային կորուստը կրկին չափվում որպես 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստ:

Պարտազանցման տեղի ունենալու հավանականության ժամկետային կառուցվածքի ստեղծում

Ժամկետանց օրերն օգտագործվում են որպես հիմնական ելակետային տվյալներ պարտքային ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքների գծով պարտազանցման տեղի ունենալու հավանականության ժամկետային կառուցվածքը ստեղծելիս միգրացիայի մատրիցների Մարկովի մոդելում: Միգրացիայի մատրիցները կառուցվում են նախորդ 36 ամիսների տվյալների հիման վրա:

Պարտազանցման սահմանում

Կազմակերպությունը համարում է, որ ֆինանսական ակտիվի գծով տեղի է ունեցել պարտազանցում, եթե՝

- հավանական չէ, որ վարկառուն ամբողջությամբ կկատարի Կազմակերպության նկատմամբ ստանձնած իր վարկային պարտավորությունները, եթե Կազմակերպությունը չձեռնարկի այնպիսի գործողություններ, ինչպիսին գրավի իրացումն է (առկայության դեպքում),
- Կազմակերպության նկատմամբ վարկառուի վարկային պարտավորություններից որևէ մեկն ավելի քան 90 օր ժամկետանց է,,
- հավանական է դառնում, որ ակտիվի պայմանները կվերանայվեն վարկառուի սնանկության արդյունքում՝ վարկային պարտավորությունները կատարելու վարկառուի անկարողության պատճառով:

Ապագայամետ տեղեկատվության ներառում

Ակնկալվող պարտքային կորուստները չափելու համար օգտագործվող տեղեկատվությունը ներառում է ֆինանսադրամային ոլորտի իրավասու մարմինների կողմից հրապարակված տնտեսական տվյալների կանխատեսումները: Վերլուծության արդյունքում Կազմակերպությունը հայտնաբերել է կայուն կորելյացիա ՀՀ դրամ/ԱՄՆ դոլարի փոխարժեքի և վարկային պորտֆելի պարտազանցման պատմական դրույքների միջև: Հարաբերությունները ստուգվում են ռեգրեսիոն վերլուծության միջոցով: Ինչպես հիմնական մակրոտնտեսական ցուցանիշի, այնպես էլ պարտազանցման պատմական դրույքների համար օգտագործվել են միջին տարեկան դրույքները:

Կազմակերպությունը մակրոտնտեսական տվյալների կանխատեսումները ստանում է երրորդ կողմ հանդիսացող աղբյուրից (Արժույթի միջազգային հիմնադրամ): Կազմակերպության Պարտքային ռիսկի կառավարման բաժնի փորձագետները որոշում են տարբեր սցենարներին վերագրելի կշիռները:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների սցենարներից յուրաքանչյուրում օգտագործված հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները/ենթադրությունները 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	ԱՊԿ սցենար	Որոշված հավանականություն, %	2025թ.	2026թ.
Հիմնական գործոններ				
ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեք				
	Լավատեսական	20%	357.7	379.3
	Բազային	50%	404.4	426.0
	Վատատեսական	30%	451.2	472.8

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների սցենարներից յուրաքանչյուրում օգտագործված հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները/ենթադրությունները 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	ԱՊԿ սցենար	Որոշված հավանականություն, %	2024թ.	2025թ.
Հիմնական գործոններ				
ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեք				
	Լավատեսական	20%	355.9	359.7
	Բազային	50%	392.2	396.0
	Վատատեսական	30%	428.5	432.2

Վերափոխված ֆինանսական ակտիվներ

Վարկի պայմանագրային պայմանները կարող են վերափոխվել մի շարք պատճառներից ելնելով, ներառյալ շուկայական պայմանների փոփոխությունը, հաճախորդների պահպանումը և այլ գործոնները, որոնք կապված չեն հաճախորդի վճարունակության ներկայիս կամ հնարավոր վատթարացման հետ: Գոյություն ունեցող վարկը, որի պայմանները վերափոխվել են, կարող է ապաճանաչվել, և վերաբանակցված վարկը կարող է ճանաչվել որպես նոր վարկ իրական արժեքով՝ Ծանոթագրություն 4 (ե) (iii) կետում ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն:

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները վերափոխվում են, և վերափոխումը չի հանգեցնում ապաճանաչման, որոշելու համար, թե արդյոք տեղի է ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ, համեմատվում են՝

- պարտազանցման տեղի ունենալու հավանականությունը ֆինանսական գործիքի գործողության մնացած ժամկետի ընթացքում հաշվետու ամսաթվի դրությամբ՝ ելնելով վերափոխված պայմաններից,
- պարտազանցման տեղի ունենալու հավանականությունը ֆինանսական գործիքի գործողության մնացած ժամկետի ընթացքում, որը գնահատվում է սկզբնական ճանաչման պահին առկա տվյալների և սկզբնական պայմանագրային պայմանների հիման վրա:

Եթե վերափոխումը հանգեցնում է ապաճանաչման, ճանաչվում է նոր վարկ և դասվում 1-ին փուլին (ենթադրելով, որ այն պարտքային առումով արժեզրկված չէ այդ պահին):

Պայմանների վերանայումը սովորաբար ներառում է մարման ժամկետի երկարաձգումը և տոկոսների վճարման ժամկետների փոփոխությունը:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս որպես առանցքային ելակետային տվյալներ հանդես են գալիս հետևյալ փոփոխականների ժամկետային կառուցվածքները.

- պարտազանցման հավանականությունը,
- կորուստը պարտազանցման դեպքում,
- պարտքի գումարը պարտազանցման պահին:

1-ին փուլի գործիքների գծով ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են բազմապատկելով 12-ամսյա պարտազանցման հավանականությունը պարտազանցման դեպքում առաջացող կորստի գումարով և պարտքի գումարով պարտազանցման պահին: Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են բազմապատկելով ամբողջ ժամկետի համար պարտազանցման հավանականությունը պարտազանցման դեպքում առաջացող կորստի գումարով և պարտքի գումարով պարտազանցման պահին:

Կազմակերպությունը գնահատում է պարտազանցման դեպքում առաջացող կորուստը հիմք ընդունելով պարտականությունները չկատարած պայմանագրային կողմերին ներկայացված պահանջների արդյունքում միջոցների վերադարձման ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը կամ գրավի արժեքը:

Պարտքի գումարը պարտազանցման պահին իրենից ներկայացնում է պարտքի ակնկալվող գումարը պարտազանցման դեպքում: Կազմակերպությունը պարտազանցման պահին պարտքի գումարը հաշվարկում է հիմք ընդունելով պայմանագրային կողմի պարտքի ընթացիկ գումարը և պայմանագրով թույլատրվող և մաշվածության արդյունքում այդ գումարի հնարավոր փոփոխությունները: Ֆինանսական ակտիվի համար պարտքի գումարը պարտազանցման պահին իրենից ներկայացնում է վերջինիս համախառն հաշվեկշռային արժեքը պարտազանցման պահին:

Ինչպես նշված է վերը և պայմանով, որ 1-ին փուլի ֆինանսական ակտիվների համար առավելագույնս կօգտագործվի պարտազանցման հավանականության 12-ամսյա ցուցանիշը, Կազմակերպությունն ակնկալվող պարտքային կորուստները չափում է հաշվի առնելով պարտազանցման ռիսկն այն առավելագույն պայմանագրային ժամանակահատվածում (ներառյալ երկարաձգման բոլոր հնարավորությունները վարկառուի համար), որի ընթացքում այն ենթարկվում է պարտքային ռիսկին, եթե նույնիսկ Կազմակերպությունը դիտարկում է ավելի երկար ժամանակահատված պարտքային ռիսկի կառավարման նպատակների համար: Առավելագույն պայմանագրային ժամանակահատվածը տևում է մինչև այն ամսաթիվը, երբ Կազմակերպությունն իրավունք ունի պահանջել փոխատվության մարումը կամ դադարեցնել փոխատվության հանձնառությունը կամ երաշխավորությունը:

Պարտքային ռիսկի նմանատիպ բնութագրեր ունեցող վարկերի պորտֆելի համար Կազմակերպությունն ակնկալվող պարտքային կորուստները չափում է խմբային հիմունքով: Այդ բնութագրերը ներառում են՝

- սեգմենտը,
- արժույթը,
- տեսակը,
- գրավը:

Ակնկալվող պարտքային կորուստների խմբային հիմունքով գնահատման ենթակա պորտֆելը բաժանվում է 7 հիմնական սեգմենտի՝ գյուղատնտեսական վարկեր, բիզնես վարկեր, գրավով ապահովված սպառողական վարկեր, գրավով չապահովված սպառողական վարկեր, աշխատավարձով ապահովված սպառողական վարկեր, ոսկու գրավով վարկեր, անձնակազմին տրված վարկեր՝ յուրաքանչյուրն առանձնացված ըստ վարկի արժույթի՝ ՀՀ դրամ, արտարժույթ: Նույն սեգմենտներն օգտագործվել են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Խմբավորումները պետք է կանոնավոր հիմունքով վերանայվեն՝ առանձին խմբերի շրջանակում պարտքային ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքների միատեսակ լինելն ապահովելու համար:

Այն պորտֆելների համար, որոնց վերաբերյալ Կազմակերպությունն ունի անցյալ ժամանակաշրջանների սահմանափակ տվյալներ, ներքին աղբյուրներից հասանելի տեղեկատվությունը լրացնելու համար օգտագործվում է արտաքին աղբյուրներից ստացված ուղենիշային տեղեկատվությունը: Ստորև ներկայացված են այն պորտֆելները, որոնց համար արտաքին աղբյուրներից ստացված ուղենիշային տեղեկատվությունն օգտագործվել է որպես նշանակալի ելակետային տվյալ ակնկալվող պարտքային կորուստները չափելիս:

	Պարտքային ռիսկին ենթարկվածությունը առ 31 դեկտեմբերի 2024թ.	Պարտքային ռիսկին ենթարկվածությունը առ 31 դեկտեմբերի 2023թ.	Օգտագործված արտաքին աղբյուրներից ստացված ուղենիշային տեղեկատվություն	
			Պարտազանցման հավանականություն	Կորուստը պարտազանցման դեպքում
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	910,354	1,254,335	«S&P»-ի պարտազանցման հաշվետվություն	«Moody's»-ի պարտքի վերադարձի վերլուծության հաշվետվություն
Բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներ	1,329,250	1,956,202	«S&P»-ի պարտազանցման հաշվետվություն	«Moody's»-ի պարտքի վերադարձի վերլուծության հաշվետվություն
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	2,362,438	1,420,654	«S&P»-ի պարտազանցման հաշվետվություն	«Moody's»-ի պարտքի վերադարձի վերլուծության հաշվետվություն

Պարտքային ռիսկի համակենտրոնացում

Պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը որպես կանոն արտացոլվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և չճանաչված պայմանագրային հանձնառություններում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ պարտքային ռիսկի նվազեցման վրա:

Ստորև ներկայացված է ֆինանսական ակտիվների գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը հաշվետու ամսաթվի դրությամբ:

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	910,200	1,253,132
Բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներ	1,321,153	2,139,337
Հաճախորդներին տրված վարկեր	29,741,306	27,422,790
Ներդրումային արժեթղթեր	2,350,447	1,415,510
Այլ ֆինանսական ակտիվներ	40,423	104,334
Ընդհանուր առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին	**34,363,529**	**32,335,103**

(գ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկը ներառում է արժութային, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսակիր և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձնահատուկ փոփոխությունների ազդեցությանը և շուկայական գների ու արտարժույթի փոխարժեքների փոփոխականության մակարդակի փոփոխություններին: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել և հսկել շուկայական ռիսկին ենթարկվածությունը և պահպանել այն ընդունելի սահմանաչափերում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց օպտիմալ եկամտաբերություն:

(i) Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխությունների հետևանքով: Կազմակերպությունը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական հոսքերի վրա շուկայում գերակշռող տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել այն կամ հանգեցնել կորուստների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխությունների դեպքում:

Տոկոսադրույքի ճեղքվածքի վերլուծություն

Տոկոսադրույքի ռիսկը հիմնականում կառավարվում է տոկոսադրույքների ճեղքվածքի հսկողության միջոցով: Ստորև ամփոփ կերպով ներկայացված է տոկոսադրույքների ճեղքվածքի վերաբերյալ տեղեկատվությունը հիմնական ֆինանսական գործիքների համար:

հազ. դրամ	**Միջին արդյունա-վետ տոկո-սադրույք**	**Մինչև 3 ամիս**	**3-6 ամիս**	**6-12 ամիս**	**1-5 տարի**	**Ավելի քան 5 տարի**	**Ոչ տոկո-սակիր**	**Հաշվեկշռ. արժեք**
31 դեկտեմբերի 2024թ.								
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4.34%	172,973	-	-	-	-	862,134	1,035,107
Բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություն-ներում տեղաբաշխված միջոցներ								
– Ժամկետային ավանդներ	8.94%	411,586	456,393	453,174	-	-	-	1,321,153
Հաճախորդներին տրված վարկեր	28.13%-33.57%	3,051,216	2,534,246	5,184,735	18,062,252	908,857	-	29,741,306
Ներդրումային արժեթղթեր	10.03%	539,874	270,619	74,514	845,075	620,365	-	2,350,447
Այլ ֆինանսական ակտիվներ		-	-	-	-	-	40,423	40,423
		4,175,649	**3,261,258**	**5,712,423**	**18,907,327**	**1,529,222**	**902,557**	**34,488,436**
Պարտավորություններ								
Ստացված վարկեր և փոխառություններ	10.24%	(93,631)	-	(2,011,400)	-	-	-	(2,105,031)
Վարձակալության գծով պարտավորություններ	12.17%	(27,877)	(25,869)	(45,359)	(242,139)	-	-	(341,244)
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	-	-	-	-	-	(39,769)	(39,769)
		(121,508)	**(25,869)**	**(2,056,759)**	**(242,139)**	**-**	**(39,769)**	**(2,486,044)**
		4,054,141	**3,235,389**	**3,655,664**	**18,665,188**	**1,529,222**	**862,788**	**32,002,392**

հազ. դրամ	Միջին արդյունա-վետ տոկո-սադրույք	Մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ոչ տոկո-սակիր	Հաշվեկշռ. արժեք
31 դեկտեմբերի 2023թ.								
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	6.11%	1,002,508	-	-	-	-	385,231	1,387,739
Բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություն-ներում տեղաբաշխված միջոցներ								
– Ժամկետային ավանդներ	8.37%	649,302	1,297,175	-	-	-	-	1,946,477
– Ֆինանսական կազմակերպություն-ներին տրված վարկեր	10.75%	192,860	-	-	-	-	-	192,860
Հաճախորդներին տրված վարկեր	29.51%-33.66%	3,008,323	2,374,651	4,673,919	16,894,730	471,167	-	27,422,790
Ներդրումային արժեթղթեր	10.67%	199,607	249,527	47,271	300,888	618,217	-	1,415,510
Այլ ֆինանսական ակտիվներ		-	-	-	-	-	104,334	104,334
		5,052,600	**3,921,353**	**4,721,190**	**17,195,618**	**1,089,384**	**489,565**	**32,469,710**
Պարտավորություններ								
Ստացված վարկեր և փոխառություններ*	6.94%-10.27%	(1,078,641)	-	-	(2,011,400)	-	-	(3,090,041)
Վարձակալության գծով պարտավորություններ	11.92%	(28,462)	(26,532)	(65,150)	(293,509)	(7,865)	-	(421,518)
Այլ ֆինանսական պարտավորություններ		-	-	-	-	-	(38,518)	(38,518)
		(1,107,103)	**(26,532)**	**(65,150)**	**(2,304,909)**	**(7,865)**	**(38,518)**	**(3,550,077)**
		3,945,497	**3,894,821**	**4,656,040**	**14,890,709**	**1,081,519**	**451,047**	**28,919,633**

* Վարկերը և փոխառությունները ներկայացված են որպես ըստ պահանջի մարման ենթակա՝ կովենանտների խախտման պատճառով (Ծանոթագրություն 19):

Զգայնության վերլուծություն

Տոկոսադրույքի ճեղքվածքի վերլուծության վրա հիմնված տոկոսադրույքի կառավարումը լրացվում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայնության հսկողությամբ: Ստորև ներկայացված է տոկոսադրույքների փոփոխությունների (տոկոսադրույքների վերանայման ռիսկ) նկատմամբ զուտ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի (առանց հարկերի) զգայնության վերլուծությունը, որն իրականացվել է տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների եկամտաբերության բոլոր կորերի 100 բազիսային կետով (բկ) զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի և տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների, բացառությամբ տոկոսակիր դրամական միջոցների և դրանց համարժեքների, հաճախորդների ընթացիկ հաշիվների և ցպահանջ ավանդների 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դիրքերի հիման վրա:

	2024թ. հազ. դրամ	**2023թ. հազ. դրամ**
100 բկ զուգահեռ աճ	53,574	55,689
100 բկ զուգահեռ նվազում	(53,574)	(55,689)

(ii) Արժութային ռիսկ

Կազմակերպությունն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ: Ակտիվները և պարտավորություններն արտահայտված են հիմնականում ԱՄՆ դոլարով:

Արժութային ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ԱՄՆ դոլարով արտահայտված ֆինանսական ակտիվների և պարտավորություններ ենթարկվածությունն արժութային ռիսկին դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2024թ. հազ. դրամ	**2023թ. հազ. դրամ**
ԱԿՏԻՎՆԵՐ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	126,266	35,585
Հաճախորդներին տրված վարկեր	680,528	1,576,101
Ընդամենը ակտիվներ	**806,794**	**1,611,686**
Վարկեր և փոխառություններ	-	(856,962)
Ընդամենը պարտավորություններ	**-**	**(856,962)**
Զուտ դիրքը	**806,794**	**754,724**

Ստորև աղյուսակում ներկայացված 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի նվազումը ԱՄՆ դոլարի նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունն իրականացնելիս հաշվի չեն առնվել հարկերը և հիմք են ընդունվել արտարժույթների փոխարժեքների փոփոխությունները, որոնք Կազմակերպությունը դիտարկում է որպես ողջամտորեն հնարավոր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Արտարժույթի փոխարժեքի տատանումներից ստացվող եկամուտը (ծախսը) ենթակա չէ հարկման (ենթակա չէ նվազեցման): Վերլուծությունն իրականացնելիս ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի աճ 10%-ով	80,679	75,472

2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի աճը ԱՄՆ դոլարի նկատմամբ կունենար գումարային առումով նույն, սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ ելնելով այն ենթադրությունից, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

(դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Կազմակերպությունը կունենա դժվարություններ ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման հիմնարար գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել կորուստների ռիսկը:

Կազմակերպության կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական հոսքերի հետ կապված պարտականությունները սահմանված ժամկետներում կատարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Տնօրենների խորհրդի կողմից:

Կազմակերպությունը ձգտում է պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածք, որը կազմված է բանկերից և ֆինանսական կազմակերպություններից ստացված երկարաժամկետ ու կարճաժամկետ վարկերից, որոնք ուղեկցվում են բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելներով, իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ և արդյունավետ բավարարելու համար:

Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

- դրամական հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արտարժույթների և այդ դրամական հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- ֆինանսավորման աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում,
- պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
- պարտքի հաշվին ֆինանսավորման ներգրավման ծրագրերի մշակում,
- բարձր իրացվելի ակտիվների պորտֆելի պահպանում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական հոսքերի դադարեցման դեպքում,
- իրացվելիության և ֆինանսավորման անընդհատությունն ապահովող ծրագրերի մշակում,
- օրենսդրական պահանջների հետ իրացվելիության ցուցանիշների համապատասխանության հսկողություն:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ֆինանսական պարտավորությունների գծով չզեղչված դրամական հոսքերը՝ ըստ պայմանագրով սահմանված ամենավաղ մարման ժամկետի: Աղյուսակներում ներկայացված դրամական ներհոսքի և արտահոսքի ընդհանուր համախառն գումարն իրենից ներկայացնում է չզեղչված պայմանագրային դրամական հոսքերը ֆինանսական պարտավորությունների գծով:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների վերլուծությունն ըստ մարման ժամկետների 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	**Ցպահանջ և մինչև 1 ամիս**	**1-ից 3 ամիս**	**3-ից 6 ամիս**	**6-ից 12 ամիս**	**Ավելի քան 1 տարի**	**Արտահոսքի ընդհանուր համախառն գումար**	**Հաշվեկշռային արժեք**
Ոչ ածանցյալ պարտավորություններ							
Վարկեր և փոխառություններ	195,028	-	-	2,111,143	-	2,306,171	2,105,031
Վարձակալության գծով պարտավորություններ	14,998	23,443	33,999	59,860	286,643	418,943	341,244
Այլ ֆինանսական պարտավորություններ	39,769	-	-	-	-	39,769	39,769
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**249,795**	**23,443**	**33,999**	**2,171,003**	**286,643**	**2,764,883**	**2,486,044**
Փոխատվության հանձնառություններ	**22,697**	**-**	**-**	**-**	**-**	**22,697**	**22,697**

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների վերլուծությունն ըստ մարման ժամկետների 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	**Ցպահանջ և մինչև 1 ամիս**	**1-ից 3 ամիս**	**3-ից 6 ամիս**	**6-ից 12 ամիս**	**Ավելի քան 1 տարի**	**Արտահոսքի ընդհանուր համախառն գումար**	**Հաշվեկշռային արժեք**
Ոչ ածանցյալ պարտավորություններ							
Վարկեր և փոխառություններ*	100,294	588,342	209,288	309,920	2,212,540	3,420,384	3,090,041
Վարձակալության գծով պարտավորություններ	15,352	34,380	46,360	113,838	523,761	733,691	421,518
Այլ ֆինանսական պարտավորություններ	38,518	-	-	-	-	38,518	38,518
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**154,164**	**622,722**	**255,648**	**423,758**	**2,736,301**	**4,192,593**	**3,550,077**
Փոխատվության հանձնառություններ	**93,150**	**-**	**-**	**-**	**-**	**93,150**	**-**

* Վարկերը և փոխառությունները ներկայացված են ըստ պայմանագրով նախատեսված մարման ժամկետների: Կովենանտների խախտման հետևանքները (Ծանոթագրություն 19) ներկայացված են ստորև բերվող ժամկետայնության վերլուծությունում:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ ակնկալվող մարման ժամկետների:

հազ. դրամ	**Ցպահանջ և մինչև 3 ամիս**	**3-6 ամիս**	**6-12 ամիս**	**1-ից 5 տարի**	**Ավելի քան 5 տարի**	**Անժամկետ**	**Ժամկետանց***	**Ընդամենը**
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,035,107	-	-	-	-	-	-	1,035,107
Բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներ	411,586	456,393	453,174	-	-	-	-	1,321,153
Հաճախորդներին տրված վարկեր	2,654,948	2,534,246	5,184,735	18,062,252	908,857	-	396,268	29,741,306
Ներդրումային արժեթղթեր	539,874	270,619	74,514	845,075	620,365	-	-	2,350,447
Գուդվիլ	-	-	-	-	-	27,788	-	27,788
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	342,604	-	342,604
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	-	-	-	-	320,904	-	320,904
Այլ ակտիվներ	40,423	-	-	-	-	92,523	-	132,946
Ընդամենը ակտիվներ	**4,681,938**	**3,261,258**	**5,712,423**	**18,907,327**	**1,529,222**	**783,819**	**396,268**	**35,272,255**
Պարտավորություններ								
Վարկեր և փոխառություններ	(93,631)	-	(2,011,400)	-	-	-	-	(2,105,031)
Ընթացիկ հարկային պարտավորություն	-	(726,548)	-	-	-	-	-	(726,548)
Վճարվելիք շահաբաժիններ	(510,000)	(340,000)	-	-	-	-	-	(850,000)
Հետաձգված հարկային պարտավորություն	-	-	-	-	-	(62,689)	-	(62,689)
Վարձակալության գծով պարտավորություններ	(27,877)	(25,869)	(45,359)	(242,139)	-	-	-	(341,244)
Այլ պարտավորություններ	(100,508)	-	(399,466)	-	-	(881)	-	(500,855)
Ընդամենը պարտավորություններ	**(732,016)**	**(1,092,417)**	**(2,456,225)**	**(242,139)**	**-**	**(63,570)**	**-**	**(4,586,367)**
Զուտ դիրքը	**3,949,922**	**2,168,841**	**3,256,198**	**18,665,188**	**1,529,222**	**720,249**	**396,268**	**30,685,888**

* Ժամկետանց վարկերի ժամկետանց մաս

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ ակնկալվող մարման ժամկետների:

հազ. դրամ	**Ցպահանջ և մինչև 3 ամիս**	**3-6 ամիս**	**6-12 ամիս**	**1-ից 5 տարի**	**Ավելի քան 5 տարի**	**Անժամկետ**	**Ժամկետանց***	**Ընդամենը**
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,387,739	-	-	-	-	-	-	1,387,739
Բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներ	842,162	1,297,175	-	-	-	-	-	2,139,337
Հաճախորդներին տրված վարկեր	2,519,237	2,374,651	4,673,919	16,894,730	471,166	-	489,087	27,422,790
Ներդրումային արժեթղթեր	199,607	249,527	47,271	300,888	618,217	-	-	1,415,510
Գուդվիլ	-	-	-	-	-	27,788	-	27,788
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	380,919	-	380,919
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	-	-	-	-	372,321	-	372,321
Այլ ակտիվներ	104,334	-	-	-	-	114,218	-	218,552
Ընդամենը ակտիվներ	**5,053,079**	**3,921,353**	**4,721,190**	**17,195,618**	**1,089,383**	**895,246**	**489,087**	**33,364,956**
Պարտավորություններ								
Վարկեր և փոխառություններ**	(1,078,641)	-	-	(2,011,400)	-	-	-	(3,090,041)
Ընթացիկ հարկային պարտավորություն	-	(760,710)	-	-	-	-	-	(760,710)
Վճարվելիք շահաբաժիններ	(355,574)	(355,574)	-	-	-	-	-	(711,148)
Հետաձգված հարկային պարտավորություն	-	-	-	-	(83,833)	-	-	(83,833)
Վարձակալության գծով պարտավորություններ	(28,462)	(26,532)	(65,150)	(293,509)	(7,865)	-	-	(421,518)
Այլ պարտավորություններ	(289,364)	-	(394,696)	-	-	(15,534)	-	(699,594)
Ընդամենը պարտավորություններ	**(1,752,041)**	**(1,142,816)**	**(459,846)**	**(2,304,909)**	**(91,698)**	**(15,534)**	**-**	**(5,766,844)**
Զուտ դիրքը	**3,301,038**	**2,778,537**	**4,261,344**	**14,890,709**	**997,685**	**879,712**	**489,087**	**27,598,112**

* Ժամկետանց վարկերի ժամկետանց մաս

** Վարկերը և փոխառությունները ներկայացված են որպես ըստ պահանջի մարման ենթակա՝ կովենանտների խախտման պատճառով (Ծանոթագրություն 19):

23 Կապիտալի կառավարում

Կազմակերպության կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

Կազմակերպությունը որպես կապիտալ սահմանում է օրենսդրությամբ վարկային կազմակերպությունների համար որպես կապիտալ սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն՝ վարկային կազմակերպությունների նվազագույն կանոնադրական կապիտալը պետք կազմի 150,000 հազար դրամ (2023թ-ին՝ 150,000 հազար դրամ), իսկ ընդհանուր կապիտալը՝ 1,000,000 հազար դրամ (2023թ-ին՝ 150,000 հազար դրամ): Արտարժույթի առք ու վաճառքի լիցենզիա ստանալուց հետո ընդհանուր կապիտալի նկատմամբ պահանջներն աճել են: 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության կանոնադրական կապիտալի և ընդհանուր կապիտալի չափերը համապատասխանում էին սահմանված նվազագույն կապիտալի պահանջներին:

ՀՀ ԿԲ-ի կանոնակարգի համաձայն՝ 2021թ-ից վարկային կազմակերպությունները պետք է ապահովեն, որպեսզի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշը («կապիտալի համարժեքության ցուցանիշ») բարձր լինի սահմանված նվազագույն մակարդակից: 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանված նվազագույն մակարդակը կազմում է 10% (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 10%): 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում է օրենսդրությամբ սահմանված ցուցանիշին:

Ստորև ներկայացված է կապիտալի համարժեքության ցուցանիշի հաշվարկը ՀՀ ԿԲ-ի պահանջների համաձայն 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2024թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված	**2023թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված**
Ընդամենը կապիտալ	8,744,627	8,742,254
Ընդամենը ռիսկով կշռված ակտիվներ	27,147,495	25,220,185
Ընդամենը կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների տոկոսային հարաբերակցություն	**32.21%**	**34.66%**

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկի կշիռների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի և պայմանագրային կողմի հետ կապված պարտքային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականը՝ հաշվի առնելով պահանջներին համապատասխանող ցանկացած գրավ կամ երաշխավորություն: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային հանձնառությունների համար՝ որոշակի ճշգրտումներով՝ հնարավոր կորուստների առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

24 Փոխատվության հանձնառություններ

Կազմակերպությունն ունի վարկեր տրամադրելու հանձնառություններ: Այդ հանձնառությունները նախատեսում են վարկային միջոցների տրամադրում հաստատված վարկերի տեսքով: Փոխատվության հանձնառությունների հետ կապված Կազմակերպությունը կիրառում է պարտքային ռիսկի կառավարման նույն քաղաքականությունը և ընթացակարգերը, որոնք կիրառվում են հաճախորդներին վարկեր տրամադրելիս:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են փոխատվության հանձնառությունների պայմանագրով նախատեսված գումարները, և ենթադրվում է, որ գումարներն ամբողջությամբ տրամադրված են:

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Պայմանագրով նախատեսված գումար		
Չօգտագործված փոխատվության հանձնառություններ	22,697	93,150
Պարտքային կորստի պահուստ	-	(14,458)

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 22,124 հազար դրամ գումարով փոխատվության հանձնառություններն ամբողջությամբ դասված են 1-ին փուլ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 91,054 հազար դրամ գումարով փոխատվության հանձնառությունները դասված էին 1-ին փուլ, 1,290 հազար գումարով փոխատվության հանձնառությունները՝ 2-րդ փուլ և 806 հազար գումարով փոխատվության հանձնառությունները՝ 3-րդ փուլ):

Վերը ներկայացված ընդհանուր պայմանագրային փոխատվության հանձնառությունները պարտադիր չէ որ իրենցից ներկայացնեն դրամական միջոցների գծով ապագա պահանջներ, քանի որ այդ հանձնառությունները կարող են ուժը կորցնել կամ դադարել մինչև կատարվելը:

25 Պայմանական դեպքեր

(ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական ծառայությունների ոլորտը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են այլ երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Կազմակերպությունն ամբողջովին չի ապահովագրել իր հիմնական միջոցները և սարքավորումները, այն ապահովագրված չէ նաև գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ Կազմակերպության տարածքում տեղի ունեցած պատահարների կամ վերջինիս գործունեության հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց: Քանի դեռ Կազմակերպությունը չունի համապատասխան ապահովագրական ծածկույթ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է զգալի անբարենպաստ ազդեցություն ունենալ Կազմակերպության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

(բ) Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Կազմակերպությունը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Ղեկավարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի արդյունքում առաջացող պարտավորությունների վերջնական գումարը, եթե այդպիսիք լինեն, նշանակալի բացասական ազդեցություն չի ունենա ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

(գ) Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

2020թ. հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում գործում է տրանսֆերային գնագոյացման օրենսդրությունը: Օրենսդրությունը գործում է 2020թ. և հաջորդ տարիներ համար: Տրանսֆերային գնագոյացման տեղական կանոններ համանման են ՏՀՀԿ-ի ուղեցույցներին, սակայն որոշակի հանգամանքներում առկա է անորոշություն հարկային օրենսդրության գործնական կիրառման հետ կապված:

Տրանսֆերային գնագոյացման կանոնները պարտադրում են հարկ վճարողներին պատրաստել տրանսֆերային գնագոյացման փաստաթղթեր վերահսկվող գործարքների համար և սահմանում են լրացուցիչ հարկերի և տոկոսների հաշվեգրման հիմքեր և մեխանիզմներ, եթե վերահսկվող գործարքների գները տարբերվեն շուկայական գներից:

Տրանսֆերային գնագոյացման կանոնները կիրառելի են ստորև ներկայացված գործարքների նկատմամբ, եթե վերահսկվող գործարքի հանրագումարը գերազանցում 200 միլիոն դրամը հարկային տարում:

- միջպետական գործարքներ կապակցված կողմերի միջև,
- միջպետական գործարքներ օֆշորային գոտիներում գրանցված ընկերությունների հետ՝ անկախ կապակցված կողմ լինելու հանգամանքից,
- կապակցված կողմերի միջև երկրի ներսում իրականացվող գործարքներ, որոնք սահմանված են ՀՀ հարկային օրենսգրքով:

Քանի որ հարկային մարմինները և դատարանները չունեն տրանսֆերտային գնագոյացման կանոնների կիրառման փորձ, դժվար է կանխատեսել տրանսֆերային գնագոյացման նոր կանոնների ազդեցությունը այս ֆինանսական հաշվետվությունների վրա:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համարժեքորեն է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

26 Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Հսկողություն

Կազմակերպության մայր կազմակերպությունը «ԱՄՔՈՐ Հայաստան» հիմնադրամն է: Վերջնական հսկող կողմը «ԱՄՔՈՐ Հայաստան» հիմնադրամի Հոգաբարձուների խորհուրդն է՝ Ռոլանդ Ֆերնանդեսի նախագահությամբ:

Կազմակերպության մայր կազմակերպությունը հրապարակում է ֆինանսական հաշվետվություններ:

(բ) Գործարքներ Տնօրենների խորհրդի և Վարչության անդամների հետ

Ստորև ներկայացված է անձնակազմի գծով ծախսերում ներառված ընդհանուր վարձատրությունը 2024թ. դեկտեմբերի 31-ին և 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2024թ. հազ. դրամ	**2023թ. հազ. դրամ**
Աշխատակիցների և Խորհրդի անդամների կարճաժամկետ հատուցումներ	263,025	195,682
Այլ երկարաժամկետ հատուցումներ	939	3,342
	263,964	**199,024**

Այս գումարները ներառում են Տնօրենների խորհրդի և Վարչության անդամների դրամային և ոչ դրամային հատուցումները:

Ստորև ներկայացված են Վարչության անդամների հետ գործարքների մնացորդները և միջին արդյունավետ տոկոսադրույքները 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2024թ. հազ. դրամ	**Միջին արդյունավետ տոկոսադրույք, %**	**2023թ. հազ. դրամ**	**Միջին արդյունավետ տոկոսադրույք, %**
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Տրամադրված վարկեր (ընդհանուր)	12,024	20%	23,734	20%
Վարկերի արժեզրկման գծով պահուստ	(115)		(114)	

Վարկերը տրամադրված են ՀՀ դրամով և ենթակա են մարման 2026թ-ին (2023թ-ին՝ տրամադրված էին ՀՀ դրամով և ենթակա են մարման 2026թ-ին): Կապակցված կողմերի հետ գործարքները գրավով ապահովված չեն:

Ստորև ներկայացված են Վարչության անդամների հետ գործարքների գծով շահույթում կամ վնասում արտացոլված գումարները դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2024թ. հազ. դրամ	**2023թ. հազ. դրամ**
Շահույթ կամ վնաս		
Տոկոսային եկամուտ	3,554	5,380
Արժեզրկման վերականգնում/(արժեզրկումից կորուստներ)	(1)	(7)

2024թ. և 2023թ. ընթացքում Տնօրենների խորհրդի հետ գործարքներ չեն իրականացվել:

(գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Ստորև ներկայացված են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդներն ու համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները և 2024թ. շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

	Մայր կազմակերպություն		
	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %	Ընդամենը հազ. դրամ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն			
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
– ՀՀ դրամով			
Վարկեր և փոխառություններ	(2,105,031)	10%	(2,105,031)
Շահույթ (վնաս)			
Տոկոսային ծախս	(201,140)		(201,140)

Ստորև ներկայացված են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդներն ու համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները և 2023թ. շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

	Մայր կազմակերպություն		
	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %	Ընդամենը հազ. դրամ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն			
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
– ՀՀ դրամով			
Վարկեր և փոխառություններ	(2,104,107)	10%	(2,104,107)
Շահույթ (վնաս)			
Տոկոսային ծախս	(200,973)		(200,973)

Կապակցված կողմից ստացված փոխառությունը ենթակա է մարման մինչև 2025թ. (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2025թ-ին): Կապակցված կողմերի հետ գործարքները գրավով ապահովված չեն:

27 Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում

Կազմակերպությունը ֆինանսական գործիքների իրական արժեքը չափելիս կիրառում է ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիան, որն արտացոլում է չափումների ժամանակ օգտագործված ելակետային տվյալների նշանակալիությունը:

- 1-ին մակարդակ. նույն գործիքների համար գործող շուկայում գնանշված գները (չճշգրտված):

- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշված գներից տարբեր ելակետային տվյալները, որոնք դիտելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող): Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնց գնահատման համար կիրառվել են նմանատիպ գործիքների համար գործող շուկայում գնանշված գները, նմանատիպ գործիքների համար գնանշված գներն ակտիվ չհամարվող շուկաներում, կամ գնահատման այլ մեթոդներ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտելի են շուկայական տվյալներից:

- 3-րդ մակարդակ. ոչ դիտելի ելակետային տվյալներ: Այս դասակարգը ներառում է բոլոր այն գործիքները, որոնց դեպքում գնահատման մեթոդները ներառում են դիտելի տվյալների վրա չհիմնված ելակետային տվյալները և ոչ դիտելի ելակետային տվյալները նշանակալի ազդեցություն ունեն գործիքի գնահատման վրա: Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են նմանատիպ գործիքների համար գնանշված գների հիման վրա, որոնց գծով պահանջվում են նշանակալի ոչ դիտելի ճշգրտումներ կամ ենթադրություններ՝ գործիքների միջև տարբերություններն արտացոլելու համար:

2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր ֆինանսական գործիքների, բացառությամբ հաճախորդներին տրված վարկերի, ներդրումային արժեթղթերի ու վարկերի և փոխառությունների, գնահատված իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են հաճախորդներին տրված վարկերի, ներդրումային արժեթղթերի, վարկերի և փոխառությունների հաշվեկշռային և իրական արժեքները 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

2024թ.	**Իրական արժեքի հիերարխիա**	**Համախառն հաշվեկշռային արժեք հազ. դրամ**	**Իրական արժեք հազ. դրամ**	**Տարբերություն հազ. դրամ**
Հաճախորդներին տրված վարկեր	3-րդ մակարդակ	31,595,476	30,411,847	1,183,629
Ներդրումային արժեթղթեր	2-րդ մակարդակ	2,362,438	2,367,404	(4,966)
Վարկեր և փոխառություններ	3-րդ մակարդակ	2,105,031	2,168,742	(63,711)

2023թ.	**Իրական արժեքի հիերարխիա**	**Համախառն հաշվեկշռային արժեք հազ. դրամ**	**Իրական արժեք հազ. դրամ**	**Տարբերություն հազ. դրամ**
Հաճախորդներին տրված վարկեր	3-րդ մակարդակ	29,232,298	28,335,369	896,929
Ներդրումային արժեթղթեր	2-րդ մակարդակ	1,420,654	1,420,779	(125)
Վարկեր և փոխառություններ	3-րդ մակարդակ	3,090,041	3,041,070	48,971

Իրական արժեքի այս գնահատականի նպատակն է ներկայացնել այն մոտավոր գինը, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվը վաճառելու կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելու դիմաց չափման ամսաթվի դրությամբ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և սուբյեկտիվ դատողությունները, իրական արժեքը չպետք է դիտվի որպես իրացման գին՝ անմիջապես ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների փոխանցման ժամանակ:

Գնահատման մեթոդները ներառում են զուտ ներկա արժեքի և զեղչված դրամական հոսքերի մոդելները, նմանատիպ գործիքների հետ համեմատությունը, որոնց համար առկա են շուկայական դիտելի գներ, և գնահատման այլ մոդելները: Գնահատման մեթոդներում կիրառվող ենթադրությունները և ելակետային տվյալները ներառում են ոչ ռիսկային և ուղենիշային տոկոսադրույքները, վարկային սփրեդերը և այլ հավելավճարները, որոնք օգտագործվում են զեղչման դրույքները, պարտատոմսերի և բաժնետոմսերի գները, արտարժույթի փոխարժեքները, բաժնային գործիքների և բաժնային գործիքների ինդեքսի գները գնահատելու համար: Գնահատման մեթոդների նպատակն է ստանալ այն իրական արժեքը, որն արտացոլում է ֆինանսական գործիքի գինը հաշվետու ամսաթվի դրությամբ, որը կորոշվեր շուկայի մասնակիցների կողմից անկախ կողմերի միջև իրականացվող գործարքում:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների իրական արժեքը գնահատելու համար ղեկավարությունը հիմնվել է հետևյալ ենթադրությունների վրա՝ հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գծով ապագա դրամական հոսքերը զեղչելու համար կիրառվում են 21.6%-39.1% զեղչման դրույքները (2023թ-ին՝ 20.9%-69.0%):

Ներդրումային արժեթղթերի իրական արժեքը գնահատելու համար ղեկավարությունը հիմնվել է հետևյալ ենթադրությունների վրա՝ ներդրումային արժեթղթերի գծով ապագա դրամական հոսքերը զեղչելու համար կիրառվում են 8.24%-10% զեղչման դրույքները (2023թ-ին՝ 9.5%-10.77%):

Վարկերի և փոխառությունների իրական արժեքը գնահատելու համար ղեկավարությունը հիմնվել է հետևյալ ենթադրությունների վրա՝ վարկերի և փոխառությունների գծով ապագա դրամական հոսքերը զեղչելու համար կիրառվում է 11.55% զեղչման դրույքը (2023թ-ին՝ 7.80%-12.1%):